№ 4 (157) XV ՏԱՐԻ ԱՊՐԻԼ 1905

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

# ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԱՆ



ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

(1859 ՄԱՐՏԻ 11—1905 ՄԱՐՏԻ 4)

*Մարտ 4-ին, Սոֆիայի մէջ, ռումբի պայթիւնի մը զոհ գնաց մեր ընկեր*

**ԷԴՈՒԱՐԴԸ,**

*գործօն անդամ դաշնակցական կարևորագոյն մարմիններէն մէկուն։ Քանի մը կարևոր հանգամանքներու պատճառով, մենք առայժմ անկարող ենք զետեղել «Դրօշակ»-ի էջերուն մէջ անոր կենսագրութիւնը և պատկերը։ Այդ պիտի թողնի ապագային։*

# ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Մահը խլեց մեր շարքերից մեր սիրելի վետերանին, մեր անզուգական գործիչ-ընկերոջ Քրիստափոր Միքայէլեանը՝ անխոնջ քարոզիչն ու մարտնչողը, զոհ գնաց մի դժբախտ, անողորմ պատահարի...

Դանը, սասանեցուցիչ աղէտի դիմաց՝ գրիչը հրաժարւում է երկար աշխատելուց — մենք միայն յետոյ մանրամասն կը գծենք մեր մեծ նահատակի ամբողջական դէմքը, յետոյ միայն կը պատմենք հանգամանօրէն այդ հարուստ ու արգասաւոր կեանքը, կ'ասենք, թէ ի՞նչ էր նա „Դաշնակցութեան" համար, հայ յեղափոխութեան համար, հայ ժողովրդի համար։

Նա „Դաշնակցութեան" անձնաւորումն էր, նրա մէջ, կարելի է ասել, կենտրօնանում էր մեր կազմակերպութեան ամբողջ պատմութիւնը իր բոլոր յուզիչ մանրամասներով։

Նա հանդէս է գալիս կազմակերպութեան արշալոյսին, տասնուհինգ տարի սրանից առաջ, մասնակցում է նրա հիմնադրութեանը և վարպետ ձեռքով կռում է նրա ճակատագիրը։ Եւ նա կուսակցութեան առաջնորդն էր տասնուհինգ տարուց ի վեր. նա կուսակցութեան ուղեկիցն էր, նրա զարգացման բոլոր շրջաններում, անընդհատ փորձութիւնների բովում, աջողութիւնների ու տագնապի օրերում...

Ամէն անգամ, երբ ազատութեան գործը կաղում էր, կրբ ռէակցիան լաց ու վհատութիւն էր տարածում ամէն տեղ հայրենի երկրում, երիտասարդութիւնը նրան էր միշտ դարձնում իր վշտոտ հայեացքը, նրանից սպասում էր նոր խրախուսանք, նոր մարտահրաւէր։ Եւ նա իր կարող ու ազդու խօսքով, տոկուն, յարատև քարոզներով սեղմում էր ցրւող շարքերը, մղում էր ուժերը դէպի կռիւ ու զոհողութիւն։

Ոչ մէկը հայ յեղափոխական դէմքերից չէ ունեցել այնպիսի տիրական ազդեցութիւն երիտասարդութեան վրայ, ոչ մէկը չէ վաստակել այնքան ընդարձակ և այնքան խոր ժողովրդականութիւն Ռուսահայաստանում։ Եւ՛ ինտելիգենցիայի, և՛ ամբոխի մէջ, և՛ ուսանող երիտասարդութեան մէջ, և՛ նոյնիսկ բուրժուա հասարակութեան մէջ — բոլոր շրջաններում Քրիստափորը ունէր պատկառանք ունկնդիրներ, որոնց առջև նա արծարծում էր իր նուիրական պաշտամունքի նիւթը՝ թիւրքահայոց ազատութեան դատը։

Նա մարմնացած զգայնութիւն էր ազդ բոպէներին, և չէր կարելի ըսել նրան առանց յափշտակութեան։ Պարզ, անպաճոյճ էր նրա պերճախօսութիւնը, այլանց կեղծ պաֆոսի ու արհեստական շեշտերի. բայց նա միշտ եռում էր մի սուրբ կատաղութեամբ, նրա ձայնը դողում, նրա տանջված, առաքեալի դէմքը ցնցում էր խօսելու միջոցին, նա ինքն ապրում էր հայկական ճգնաժամը...

Հրապուրիչ էր նա այդ վայրկեաններին... Հակառակորդութիւնը, ցած կրքերը խպառ լռում էին, գահլիճը ելեքտրականանում էր և բոլորն էլ, համախոհ ու հակառակորդ, պատկառանքով խոնարհւում էին հռետորի գերող անձնաւորութեան առջև։

Ի՞նչ էր այդ թովիչ ազդեցութեան գաղտնիքը.

— Հերոսի բարոյական բարձրութիւնը։

Նրա լայն զարգացումն ու դրութեան խորունկ ծանօթութիւնը դարձնում էին նրա խօսքը հեղինակաւոր ու հմտալից, բայց նրա բարոյական հմայքն էր, որ այնպէս շղթայում էր ունկնդիրներին, որ տիրանում էր բազմամարդ լսարաններին, որ զինաթափ էր անում ամենաանզուսպ հակառակորդին անգամ...

Ահա թէ ինչ էր մեր Քրիստափորը. ահա թէ ում կորցրեց Հ. Յ. Դաշնակցութիւնը։ Ազնուութեան ու այլասիրութեան մի տիպար, անխախտ, երկաթէ համոզմունք, անվախ, յանդուգն մարտնչող, — ամէն տեղ, ուր նա երևում էր, ոգևորութիւն ու հաւատ էր տարածում, ամէն տեղ, նոյնիսկ խոպան ու անապատացած միջավայրերում՝ նա ծաւալում էր մի ճոխ ու բեղմնաւոր գործունէութիւն։

Անզուգական իր կազմակերպչական տաղանդով՝ նա վարպետութեամբ կարողանում էր շահագործել իրեն հանդիպած բոլոր ուժերն ու գործօնները, կարողանում էր ուղղել նրանց դէպի իդէալը—հայկական ազատութեան գործը։

Անհաշտ ու անողոք ներքին ու արտաքին թշնամիների դիմաց՝ նա մի հաշտարար ոգի էր իրայինների շրջանում։ Քանի՞ ընդհարումներ է նա խաղաղացրել, քանի՞ գժտութիւններ է հարթել ընկերների մէջ՝ իր բարոյական հեղինակութեամբ...

Ամբողջապէս գաղափար դարձած մի առաքեալ էր նա, մի „դերվիշ", ինչպէս ոմանք անուանում էին նրան. նիւթական կարօտութիւնն ու զրկանքները ոչինչ էին նրա համար, և այդ միշտ երիտասարդ, միշտ թարմ, կենսալի քարոզիչը մ'է կ հոգս միայն ունէր՝ կազմակերպութեան բարգաւաճումը, որի համար կրեց երկարատև հալածանք ռուս կառավարութեան կողմից, բանտ ու աքսոր։

„Դաշնակցութիւնը" հպարտ էր իր ՔրիստափորովՁկայ մի դրւագ կուսակցութեան պատմութեան մէջ, չկայ

մի բանավէճ ծրագրային կամ տաքտիկի խնդիրների մասին, չկայ մի ձեռնարկ, գաղափարական մի կռիւ, ուր մասնակցած չլինի մեր վետերանը, ուր նա թողած չլինի իր բնորոշ կնիքը, ուր նա հարթած չլինի ճանապարհները։

Սակայն նա միայն կուսակցութեան մարդ չէր։ Նա մ ա ր դ էր բառիս բովանդակ նշանակութեամբ։ Նա խոր յարգանք էր վայելում Կովկասի և՛ ռուս և՛ վրացի յեղափոխականների շրջաններում. իսկ երէկ նրա դամբարանի մօտ ողբում էին նրան՝ մակեդոնական շարժման ամենահռչակաւոր պարագլուխները։ Ո՛չ, Քրիստափորը չէր պատկանում միմիայն հայութեան. .

Նա ս ո ց ի ա լ ի ս տ էր իր աշխարհայեացութեամբ, իր զգացումներով ու տեմպերամենտով, իր ամբողջ կեանքով. բայց նա և հ ա յ ր ե ն ա ս է ր էր բառիս ամենավեհ նշանակութեամբ։ Նրա հեռաւոր իդէալն էր՝ սոցիալիստական կազմակերպութիւնը համայնական սկզբունքների, ազգերի եղբայրութեան խարիսխի վրայ. Նա մինչև անգամ ընդունում էր ապագայի մառախուղի մէջ մի այնպիսի դրութիւն, ուր իսպառ ջնջուած կը լինին ազգայնական առանձնայատկութիւններն ու խտրութիւնները, բայց նա և գիտէր միաժամանակ, որ իւրաքանչիւր մարդ-քաղաքացի պիտի աշխատէ իր հարազատ միջավայրում, պիտի ձգտէ իր սեփական ազգը բարձրացնելու. . .

Նրա սիրտը արիւնոտւում էր ի տես մահաշունչ իրականութեան, ուր հայ ժողովուրդը ստիպուած է կռուել — և ո՛րպիսի անբաւ զոհողութիւններով — ոչ թէ քաղաքական ու սոցիալական ռէֆօրմների համար, այլ ամենատարրական մարդկային իրաւունքները ձեռք բերելու համար և ամենասուրբը բոլոր իրաւունքներից — ապրելու իրաւունքը. .

Նա գիտակցում էր պատմութեան չարաշուք տնօրինութիւնը, նա անխռով դիմաւորում էր հայութեան բաժին՝ սև, անօրինակ իրականութեան և շարունակ կոչ էր անում հայ ինտելիգենցիային, յորդորում էր նրան դաւաճանութեան սպառնալիքներով՝ կանգնած մնալ քաղաքացիական պարտքի բարձրութեան վրայ, ընտրել պահանջներից ամենահրամայականը, խնամել վէրքերից ամենացաւոտը, չձգել մի ամբողջ արիւնլուայ ժողովուրդ ի սաստ ճակատագրի։

Նա ինքը գնաց արեան ու զոհողութեան ճանապարհով, նա ինքը գահավէժ սլացաւ դէպի կեանքի յորձանուտ հոսանքը, ուսկից դարձ չկայ. . . Եւ ընկաւ կէս-ճանապարհին, շանթահարուած անարգ պատահարից. .

Ընկա՜ւ մեր հին առաջամարտիկը պարտաճանաչ զինւորի մահով, գործի, կռւի հնոցում, գլուխը հպարտ բարձրացրած, որպէս մի դարաւոր կաղնի, անակնկալ կայծակից խորտակուած. . . Եւ այժմ նա հանգչում է այնտեղ, ուր միայն կարող է հանգչել անխոնջ, մոլեռանդ աշխատաւորը. .

Մնաս բարեա՜ւ, անմոռանալի ընկեր և առաջնորդ. կանգնած սգաւոր գերեզմանիդ առաջ՝ քո զինակիցները կարող են կոչել քեզ. „Դու զուր չ՛աշխատեցիր, զուր չկռւեցիր“։ Կազմակերպութիւնը, որին քո լաւագոյն ուժերը տուիր, այսօր արդէն ամուր է, անսասան, նւիրւած ժողովրդի ազատագրութեան գործին, տոգորւած այն անշէջ, սրբազան կրակով, որով դու ինքդ էիր բոցավառւած։ Այն հարիւրաւոր ու հազարաւոր երիտասարդները, որոնց ուսուցիչն ու ներշնչողն էիր դու, յաւէտ կը պահեն քո մեծ յիշատակը իրենց սրտերում և ի կատար կ՛ածեն այն նւիրական գործը, որ քո պաշտամունքն էր և քո կտակն էր։

Մնաս բարեա՜ւ, տարաբախտ ընկեր. բռնակալութեան ճանկերում սեղմւած՝ քեզ սիրող ու գուրգուրող երիտասարդութիւնը խուլ հեկեկանքներով միայն արձագանք տւեց քո մահւան բօթին։ Հանգչի՛ր խաղաղութեամբ օտար երկնքի տակ, մինչև որ հայրենի խեղդւուկ մթնոլորտը փոքր ինչ թարմանալով՝ երախտապարտ սերունդը տանէ, ամփոփէ քո նշխարները իրենց արժանի սրբավայրում — հայկական վերածնութեան ռահվիրաների շարքում։ Պատւի՜ր յիշատակիդ, բազմավաստակ ընկեր։ Թո՛ղ քո վեհ դէմքը գերեզմանից էլ շարունակէ ազդել ու ոգևորել հայ մարտիկներին և թող բռնակալութիւնը, որի դէմ դու կռւեցիր ընկերներիդ հետ ստոյիկեան անսասանութեամբ, և որը միշտ ձգտում է խեղդել քո Գործը արեան հեղեղների, մարդկային սպանդանոցների մէջ, — թող նա գիտակցէ միանգամ ընդմիշտ, որ Քրիստափորներ ծնող ժողովուրդը երբէք չի մեռնի. . .

## ԱՂԷՏԱՒՈՐ ՄԱՀԸ

Հսկայական ծրագիրները գլխի մէջ, յափշտակւած ժողովրդական տանջանքների սփոփման իղձերով՝ նա պտտւում էր քաղաքից քաղաք, երկրից երկիր։ Կովկասից անցաւ Շվէյցարիա, Ժընևից Բալկան, Վիէննայից Նորապատ Բուլղարիայի մայրաքաղաքը և այնտեղ, բարեկամների և համախոհների նեղ, բայց մտերիմ շրջանում, իր փայփայած ծրագիրների հնոցի մէջ գտաւ աղէտաւոր մահը, անսպասելի ինչպէս որոտ, շանթահարող, որպէս կայծակ։

Մարտի $^{4}/_{17}$-ն էր։ Քրիստափոր Միքայէլեանը — ո՛չ, նրա մտերմական հոգուն չէ սազում այս ձևը — Քրիստափորը ուղեկցւած տասնից աւելի ընկերներով, հայ և մակեդոնց, գնաց մերձակայ լեռներում թագնւած մի ձոր, ռումբի փորձեր անելու։ Կնեաժեվօ գիւղի մօտ էր այդ։ Փորձի նպատակն էր՝ պարզել ընկեր Էդուարդին՝ այդ վաղուց յեղափոխականին՝ ռումբերի կատարելագործման նորանոր ձևերը, մշակւած իր ձեռքով, արդիւնք երկար ամիսների աշխատանքի։ Ընկերական մի համեստ ճաշկերոյթից յետոյ՝ վիճակակից երկու ազգերի զաւակները դաշտ դուրս եկան։ Սկսւեցին փորձերն ու վիճաբանութիւնները։ Տարբեր էին կարծիքները։ Ոմանք անաջողութիւն էին գուշակում, զգուշութեան յորդոր կարդալով։ Միւսները տատանւում էին։ Անյողդողդ էր միայն մէկը — Քրիստափորը, վստահ նախորդ փորձերին, հաւատացած աներկբայ աջողութեան։

Ահա վերջապէս ռմբաձիգը՝ Էդուարդ դիրք բռնեց։ Միւսները, զգուշութեան համար, հեռացան՝ աւելի բարձր տեղից դիտելու պայթիւնի հետևանքները։ Անշարժ մնաց միայն Քրիստափորը, անբաժան ռմբաձիգ ընկերոջից։ Ոչ մի խնդիրք, ոչ մի յորդոր, ոչ մի նախազգուշացումն՝ տեղահան չ՚արեց նրան...

Անցաւ մի քանի րոպէ։ Ու յանկարծ որոտանման դղրդոցը ցնցեց շրջակայքը, և ծուխի ամպը պատեց փորձի ամբողջ վայրը։ Հեռացած ընկերները՝ ճնշող նախազգացումով ներքև սլացան, նետուեցին այն կողմը, որտեղ ռմբաձիգն էր կանգնած։ Եւ նրանց աչքերի առջև բացուեց սոսկալի ողբերգութեան ահաւոր տեսարանը.—Քրիստափորը թաւագլոր, հաղիւ շունչը բերանին, Էդուարդը հեռու նետուած, խրուած ձիւնախառն հողի մէջ՝ արդէն մահացած։ Սարսռեցուցիչ լռութեան մէջ, գերբնական ուժով, մի ճիչ լսուեց։ Ընկերները օգնութեան յուսահատական ճիգ արեցին — և անմոռանալի նահատակը, իբրև „մնաք բարեաւի“ վերջին նշան, փորձեց վերբանալ մարած աչքերը, նայեց իր շուրջը, դիտեց հեռուն, շատ հեռո՞ւն և հանգաւ՝ առանց բառ անգամ արտասանելու...

Վէրքերը ծանր էին և կսկծաբեր։ Էդուարդի ամբողջ աջ երեսը, կրծքի աջ կողմը, ինչպէս և աջ ոտը, պատառոտած էին և այլանդակած։ Աջ ձեռքը կտրուած էր արմունկից։ Ռումբը կատարել էր իր աւերմունքը անխնայօրէն, կատաղութեամբ։ Քրիստափորի վէրքերը արդիւնք ռումբի նետուածքների, երեք էին։ Երկուսը ձախ երեսին և ձախ ոտին—թեթև և անկարևոր։ Երրորդ վէրքը, ուղիղ կրծքին — մահացու։ Եթէ չլինէր ծոցի գրպանում պահած արծաթեայ ծխատուփը, որը երկու տեղից ծակուած էր, սիրտը պատառ-պատառ պիտի լինէր ամբողջովին։ Անվեհեր գործիչների փոխարէն՝ երկու դիակ։ Այդ էր իրականութիւնը։ Եւ նրանց վիրաւոր, յօշոտուած մարմինները, ընկած մի անհիւրընկալ ձորում, ձիւնի մէջ, մնացին երկար ժամեր, շրջապատուած ոստիկանական պահապաններով, որոնց հրամայուած էր խստութեամբ հսկել, մի րոպէ իսկ աչք չհեռացնել „քաղաքական կարևոր դէպքի“ խորհրդաւոր զոհերից...

—

Մարտի $^{10}/_{23}$-ն է։

Թաղման սգաւոր օրը։ Սոֆիայի հայկական անշուք մատուռի մէջ երկու դագաղ են դրուած՝ կողք կողքի։ Մեռան միասին, պիտի թաղուին միասին։ Խուռն բազմութիւնը լցրել է մատուռը, բակը, հրապարակը։ Մակեդոն հայդուկները, մարտական համազգեստով, պատուի պահակն էին կազմում։ Ահա աւարտեց աղօթքը, այնքան աններդաշնակ մարտիկ-յեղափոխականների ոգուն, սրտին, մտածմունքներին... և ժողովուրդը՝ դագաղները ուսերին առած՝ շարժուեց դէպի գերեզմանատուն։

Եղանակը հրաշալի էր։ Բուլգար ժողովրդի մի հոծ բազմութիւն, տեղաւորուած պատշգամներում և փողոցի երկու կողմը՝ պատկառանքով և վշտով դիտում էր հայկական նահատակութեան այս տխուր հանդէսը։ Առաջից գնում էր ներկայացուցիչների և համակրողների երկար շարքը, քառասունից աւելի պակները ձեռքին բռնած (դրանց թւում՝ Մակեդոնական կոմիտէի, Ռուսաց Սոցիալիստ-յեղափոխականների, Հնչակեան տեղ. մասնաճիւղի, Դաշնակցական խմբերի, Սարաֆովի և այլն)։ Փոքրաթիւ հոգևորական դասին հետևում էր մի քանի հաղարից բաղկացած բազմութիւնը՝ մեծ մասը մակեդոն և բուլգար, հայկական դատին համակրող տարրը։ Եւ ամբողջ բազմութեան վերքն ու ցաւը ցոլանում, մարմնանում էր այն հնչիւնների մէջ, որ զինուորական նուագախումբը վարպետօրէն տարածում էր զոյգ դագաղների շուրջը, վշտահար սրտերի մէջ...

Հանդիսային գերեզմանատանը, երկու միանման փոսի շուրջը շարուած է բազմութիւնը, յուզուած, մռայլադէմ, արտասուքը աչքերին։ Կին և տղամարդ, հայ և մակեդոն, յեղափոխական և համակրող — բոլորն էլ բռնկուած են նոյն ցաւով, խորունկ վշտի նոյնանման զգացմունքով։ Ցարգալից լռութեան ընդհատողը՝ զսպած հեկեկանքն է, որ մերթ ընդ մերթ դուրս է նետւում սիրող սրտերից, անկարող դիմադրելու փոթորկող զգացմունքներին...

Աղօթքը աւարտուեց։ Հերթը հասաւ թաղման տխրագոյն էջերին — դամբանականներին։ Երկու էին խօսողները։ Մէկը հայերի կողմից՝ Խ. Մալումեան, միւսը մակեդոնացիների կողմից՝ Ս. Գերով։ Մակեդոնական շարժման անուանի ղեկավար՝ Բօրիս Սարաֆով, վերջին րոպէին, քաղաքական ստիպողական հանգամանքներից դրդուած, հարկադրուած էր խօսքից հրաժարուել։

„Այս դագաղի մէջ — ասաց մեր հայ-ընկերը՝ վերջաբանի մէջ — ամփոփուած է հայ յեղափոխութեան սիրտը և հայկական մարտնչող երիտասարդութեան փայփայանքը։ Գրչի վարպետ չէր մեր անմոռաց ընկերը՝ կամ շանթահարող ճառասաց, և ոչ էլ հայդուկների ղեկավար՝ Արեան երկրի փշոտ ձորերում։ Ոչ։ Նրա ուժն ու տաղանդը բնորոշելու համար՝ պէտք է հնարել մի նոր բառ, որ գոյութիւն չունի մեր լեզուի մէջ,—մարդագործ էր նա, մի հմայիչ դիւթիչ ուժ, որ հրաշակերտում էր գաղափարական մարդը խոպան, անմշակ սրտերի ու ուղեղների մէջ, շաղկապում՝ նրանց և ուղղում դէպի մարի պայքար, դէպի յեղափոխական վերանորոգիչ կռիւը։

„...Շեղ, մակեդոն ընկերներ, ու ձեր հսկողութեանն ենք յանձնում հայկական յեղափոխութեան աննման վետերանը, անմոռաց Քրիստափորին՝ իր երիտասարդ բարեկամի հետ միասին, որ նրա գործակիցը եղաւ արիւնոտ յեղափոխութեան մէջ, և հարևանը՝ անարիւն դամբարանում։ Այս երկու գերեզմանը թող հայ-մակեդոն դաշնակցութեան գրաւականը լինին, մշտական յուշարձանը՝ մեր դժբախտութեան, մեր կռուի, մեր գրաւիչ ապագայի։ Պահեցէք նրանց խնամքով, հսկեցէք նրանց քնքշութեամբ, մինչև այն Մեծ օրը, երբ մեր ընկերները, անկասկած, աւելի երջանիկ քան մենք, դարձեալ մի անգամ կը գան նոյն այս քաղաքը, ոչ գլխիկոր և վշտաբեկ, ինչպէս մենք, այլ հպարտօրէն, անկնճիռ ճակատով, այս հիւրընկալ երկրից ազատ-Հայաստան փոխադրելու նշխարները այն տարագիրների, որոնք իրենց շղթայակապ հայրենիքի մէջ, բռնապետութեան ճիրաններում սղմուած, մի գերեզմանատեղ անգամ չունեն, վերջին հանգստարանը բազմատանջ գործողների։ Այդ մեծ օրը պիտի գայ, որովհետև մեծ են զոհերը...“։

Բովանդակաւոր և հմայիչ էր ընկեր-մակեդոնացու ճառը [1])։ Ոգևորուած շեշտով նա հայկական շարժման ուրուագիծը տուեց և պատկերացրեց այն անմոռաց ու

1) Ցաւում ենք, որ այդ ճառը ձեռքի տակ չունինք, ամբողջութեամբ առաջ բերելու համար։

անձնուէր աշխատաւորներին, որոնք, մինը իբրև քարոզող, միւսը որպէս մարտիկ, երրորդը ինչպէս կազմակերպող հայկական ազատագրութիւնը հրաշակերտեցին։

Երկու օր յետոյ՝ Թարմ և Թանկագին հողակոյտի շուրջը՝ կանգնած էին սգաւոր մտերիմները։ Վերջին այցն էր այդ։ Լի յուզմունքով, խորին լռութեան ենթակայ, բոլորն էլ գերի էին հեռաւոր, տարբեր և սրտատրոփ յոյշերի։ Մի ամբողջ կեանք, լի գրաւիչ դէպքերով, կապուած այդ գերեզմանի հետ — վերարտադրուեց իր ամբողջ ուժով։ „Նա՝ չտեսաւ իր տանջանքի պտուղը, չվայելեց ազատութեան արշալոյսը“։

Մեր վերջին մրմունջն էր այդ։

Մնաս բարով, աղեխարշ մրմունջը...

# ՈՂԲԻ ՆԱՄԱԿ

### ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Ո՜վ զարհուրանքի և արիւնի առաւօտ, տող մը քու դժխեմ լոյսերուդ մէջէն, ու ամէն նայուածքներու բոլոր արցունքներն ատոր մէջ գտայ, ամէն հոգիի դառնակսկիծ հեծեծանք, ամէն տուայտանք, ամէն գալարում, ամէն աղաղակ, ամէն հոնդիւն, ամէն գերեզման ատոր մէջ գտայ... Քրիստափորը մեռաւ... Ա՜ն որ զմեզ իր չքնաղ ու խորունկ հոգիովը կը սնուցանէր, ան որ քաղցր էր, ան որ անճառելիօրէն սիրող էր ու բազմագութ ու բազմաչարչար... Քրիստափորը, բովանդակ էութիւն մը, հոգիի և գաղափարի տիեզերք մը, ազատութեան և փրկութեան լուսաւորիչ մը, վարդապետ մը և այսօր մեռեալ մը միանգամայն... Օ՜, ի՞նչպէս ապրիլ այլևս, ի՞նչպէս զոյութիւն ունենալ, ի՞նչպէս տեսել, ի՞նչպէս կարենալ երազել... Կը խղդուիմ, կոր, ծանրածանր ցաւէն կը խորտակուիմ, կը չախչախուիմ ու չեմ կրնար իմքիրմէս դուրս հետուիլ, իմ մէջս վար շրջող փլատակներէն ազատուիլ, չեմ կրնար սպառուիլ, չեմ կրնար հատնիլ, վերջանալ, անէանալ, ու կատաղութենէս ու անզօրութենէս ու տարփանքէս կուլամ, կուլամ...

Ո՜վ գիտէ ի՞նչ պիտի ընեն անոնք որ հերոսներու պէս կը կռուին, ի՞նչ պիտի ընեն անոնք որ կը մտածեն, ի՞նչ պիտի ընեն անոնք որ երկիւղածօրէն կը յուսան, ի՞նչ պիտի ընէ հայութեան լաւագոյն մասը, ի՞նչ պիտի ընեն իր հազարաւոր գաղափարազաւակ աշակերտները, ի՞նչ պիտի ընեն անոնք որ զինքը կը պաշտեն, ի՞նչպէս պիտի մխիթարուին, կարելի՞ է մխիթարուիլ այլևս, թո՛ղ ըսեն ինծի, թո՛ղ ըսեն ինծի...

Մահուան անունէն որ ինծի համար միայն պաշտելի Քրիստափորը տարած է, որը աղջկան մը նման կը դողդոջեմ, կոյրի մը նման կը հալածուիմ, ստուերի մը նման կը կորսուիմ, ու կեանքի մը պէս կը մարիմ... Ի՞նչ եղար, անզուգական, ի՞նչ եղար, ամենօրեայ մարտիրոս, ի՞նչ եղար, ո՜վ բարոյատու, ի՞նչ եղար, ո՜վ անհաւասարելի. արդա՞ր է այս, արդա՞ր է, ըսէ՛, ի՞նչ եղար... Ի՞նչպէս պիտի շարժին անոնք որ քու ազատախօս պատգամներուդ և հայրական թևերուդ տակ զինուորագրուեցան, ի՞նչ պիտի ընեն անոնք որ քու դրօշակդ ու քու ծեռուըներ համբուրեցին իրենց ուխտի ժամերուն, ի՞նչ պիտի ընեն անոնք որ քու զէնքերովդ զինուեցան, որ քու նայուածքներուդ առջև երդուընցան, որ քու ազատաբեր ու անձնուրաց ճամբաներէդ քալեցին, ի՞նչ պիտի ընեն անոնք որոնց երազին մէջ Եռվայի մը մեծութեամբը արձանացար։ Ի՞նչպէս օգնութեան հասնիլ այս ամէնուն, ի՞նչպէս մահագուժել... Գիտե՞ն արդեօք այս յուսահատութեան և արիւնի առաւօտեան ժամուն, գիտե՞ն մահուանդ կործանարար լուրը, գիտե՞ն որ զոհուեցար դուն՝ ամենօրեայ ողջակէզ... Թերևս չեն գիտեր ու ատոր համար է որ կ'ապրին, ատոր համար է որ իրենց լայն ուսերը չեն փչիր, իրենց յուսալից աչուրները չեն կուրանար, ատոր համար է որ իրենց քայլերը կը յառաջանան ու իրենց կամքերը կ'երկաթուին... Թո՛ղ չի գիտնան քու պէտիչ մահուանդ լուրը, թո՛ղ մարդ մարդու առջև չի խօսի, թո՛ղ մարդ մարդու առջև չ'արտասուէ, թո՛ղ մարդ մարդու առջև իր սիրտը չի բանայ, թո՛ղ մարդ մարդու առջև չ'արիւնի, թո՛ղ մարդ մարդու առջև իր կերպարանքին վրայ մոխիր չի ցանէ...

Բայց ես լեռնաւոր ցաւին տակ մինակ եմ, միս մինակ, կուրծք մը չի կայ որուն վրայ կործանուիմ, նայուածք մը չի կայ որուն մէջ ապաստանիմ, ծեռք մը չի կայ որուն մահասարսուռ ծեռուընեռս երկարեմ, ոսկրակոյտ մը ես անապատի մը մէջ և չարաշուք իրիկուան մը արիւնոտ անձրևին տակ... Օ՜, ստուերներ կ'անցնին քովերէս, ապառաժակերպ ուրուականներ, սուգիս ու մտածումիս հորիզոններէն, և անհասանելի որ կը յառաջանայ, օ՜ գթութի՜ւն, գթութի՜ւն, անհասանելի որ Մղծաւանջս կը յառաջանայ, իր հովէ թևերը կը զարնէ, իր ագռաւախումբի թևերը կը փոթորկէ, իր բուի և մեռելւորի աղաղակը կուլայ, իր անողորմ դագաղին տախտակները կը շարժէ, իր սպիտակ պատանքները իմ վրաս կը նետէ և իր կարմիր խենթութիւնը, իր թունաւոր խենթութիւնը իմ մտածումիս անդունդներուն մէջը կը հոսեցնէ... Ու մահը, զայրագին մահը, մարմարակերպ մահը, համայնակուլ մահը ուսերուս վրան կը խոկայ, մահուան ամբոխներ ուսերուս վրան են, ու ես ընկճուածս, ես թշուառս, ես երազողս, ես յուսացողս, կը ծռիմ, կը դողդոջեմ, կը փլատակուիմ, արցունքներս կուգան յորդահոսան, ու յանկարծօրէն երեսս յետ կը դարձնեմ, ու ի՜նչ անագորոյն ցնորք, ի՜նչ պատկեր, ի՜նչ քաղցրութիւն, ի՜նչ ժպիտ, ի՜նչ մեծութիւն, ու կը տեսնեմ զինքը, կը տեսնեմ ամենամեծ Քրիստափորը ու կը գրկեմ ու կը փաթթուիմ ու կարօտակէզ զաւկի մը նման կը համբուրեմ, կը համբուրեմ, կը համբուրեմ... Ու արիւնս արիւնին կը խառնուի, արցունքներս իր աչքերուն մէջ իր արցունքներուն կը միանան, ատելութիւնս իր չի յագեցուած ատելութենէն կը ծովանայ ու սէրս կ'արեգակուի և յոյսիս աշտարակները նորէն կը կառուցուին... Ո՞ղջ է։ Բայց աւա՜ղ, աւա՜ղ, ցնորապատկերը անգթօրէն կ'անհետանայ, ո բուագծերը կ'արիւնին, պաշտելի ծևերը կը խորտակուին ու դիակը, հրեշտակային մարմինը, բաժան բաժան, նշխար առ նշխար, թևերուս ու կուրծքիս ու նոգիիս վրան կը ծանրանան...

Ու հիմայ գիտեմ, յստակօրէն կը տեսնեմ, ճակատագրին ծեռքերը, երկաթէ ծեռքերը, չարազօր ծեռքերը որ Քրիստափորը սիրողներուն, Քրիստափորը պաշտողներուն վիզերուն կ'երկարին՝ գազանօրէն սեղմելով, և անհասանելի, մտիկ ըրէք, հեծկլտանքնե՞ր, աղաղակնե՞ր, ոգեվարքի հոնդիւններ, հազարաւոր բերանոներէ, հազարաւոր ուխտուածներէ, օ՜ ինչ մեռելածայն և ինչ սրտակեղէք համանուագ, վասն զի ահիկայ մահագոյժն է, աղէտքն է, չարիքին ղողանջն է որ Եւրոպայէն Կովկաս և Կովկասէն Հայաստան եղեռնականօրէն հնչեց։ Ամէն մարդ իմացաւ հիմայ, ամէն մարդ իմքիր մէջ կ'աւերակուի, ամէն մարդ իր հոգիին մէջ այս մահագուժը կը լսէ ինչպէս գերեզմանափորի մը քահին ծայնը հողը պեղած պահուն...

Բայց մխիթարութիւնը նորէն ու նորէն ձեզմէ պիտի գայ, ո՜վ սիրական ու հեռաւոր ու հերոսական հայդուկներ, մխիթարութիւնը ձեր կամքէն, ձեր զօրութենէն, ձեր յաղթանակներէն պիտի գայ... Արցունքները մեզի՝ տկարներուս, անգործօններուս ձգեցէք, գիտեմ որ արցունքները ձեր արիւնծարաւ աչուըներուն ու ձեր կտրիճի հոգիներուն չեն վայելեր։ Մեր փրկութեան հիմնադիրներէն մէկը մեռաւ և իր զոհաբերումը զմեզ աւելի պիտի սրտապնդէ։ Քրիստափորին պատկերը, պաշտելի պատկերը Քրիստափորին՝ ամէն տուն, ամէն երդիք, ամէն ցաւի առջև, ամէն խրախուսանքի ժամուն, ամէն կռիւի գերագոյն վայրկեաններուն, պիտի յաճախէ և պիտի յուսադրէ... Իր արեգակեայ հոգիին ոսկիէ դուռներէն ներս նայինք ու մեր արիւնը պիտի հրավառուի, մեր խանդը պիտի եռայ, մեր բազուկները աւելի ուժով պիտի զարնեն։ Իր գերեզմանը մեր խորանն է այլևս, իր անունը մեր առջև բացուած ազատագիրքը և իր յիշատակը մեր բոլորին ռահվիրան։

Եղբայրօրէն ցաւակից և առյաւէտ սգաւոր՝

**ՍԻԱՄԱՆԹՕ**

---

*Քրիստափոր Միքայէլեանի ողբերգական մահը առաջ բերեց ցաւակցութեան բուռն արտայայտութիւններ կովկասեան հասարակութեան մէջ։ Նոյնը և զանազան հայ գաղութներում։ Կատարուել են բազմաթիւ հոգեհանգիստներ. տեղի են ունեցել սգահանդէսներ՝ նուիրուած մեր անմոռանալի ընկերոջ յիշատակին։ Ստացուած բազմաթիւ հեռագիրների մի մասը, ինչպէս և դագաղի վրայ դրուած պսակների ցանկը կը տպագրենք մի այլ անգամ, յարմար առիթով, կենսագրական մանրամասն տեսութեան հետ միասին։*

---

# ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՌԻԻ

## ԿՌԻՒՆԵՐ ՍԱՍՆՈՅ ԵՒ ՄՇՈՅ ԴԱՇՏԻՆ ՄԷՋ

ՄԱՆՐԱՄԱՍՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

*(Շարունակ. №‎ 3-ի)*

---

### 10. ՔՈՓԻ ԿՌԻՒԸ

Խումբը կը հասնի Ծովասարի տակ Բարձր-Աստուածածնայ աւերակ վանքը, ուղիղ կէսօրին։ Սմբատ, դրան վրայ պահպանութիւն ըրած ատեն՝ յանկարծ կը նկատէ, որ Տափըկի կողմէն մեծ բազմութիւն մը կը յառաջանայ, հեռադիտակը պարզ ցոյց կուտայ, որ ատոնք թշնամու զօրքերն էին. իսկ Քոփիի կողմէն ալ կըսկսի արշաւել քրդերու խումբը։ Մեր տղերք երեք կէտերէ դիրքեր կը բռնեն. — Սմբատ և Գրիգոր կը բռնեն Ծովասարի մօտ գտնուող մի գոմ. Փարհատ և Արամ կը յարձակին Քոփիի կողմէն եկող թշնամու վրայ, իսկ Մուրատ և Աւետիս կը բռնեն Տափըկի կողմը։ Կռիւը շատ սաստիկ կը լինի։ Մերոնցմէ կըսպանուին կուրավցի Մխիթար և Համբօն, որոնք մէկհատիկ էին իրենց եռանդով և քաջութեամբ. կը վիրաւորուին Համզօ, մշեցի Արամ և խլաթցի Համբարձում։ Մերոնց դիրքերը անբաւական կը լինին պաշտպանուելու և թշնամիներուն ետ քշելու, հարկաւոր կը լինի անպատճառ ջուրը անցնիլ և յարձակուիլ անոնց վրայ։ Վերջապէս հազիւ յարմար տեղ մը գտնելով — այնքան յորդառատ էր ջուրը — Աւետիս և Հաճի Գէվօն կը յաջողին անցնիլ միւս ափը։ Անոնց կը հետևին և ուրիշներ։ Ջուրը անցնողները դիմացի ափէն, իսկ մնացողները այս ափէն, թշնամուն առջևը ձգած՝ կըսկսին խփել։ Յանկարծ ետևի կողմէն կը լսուին հրացաններու ձայներ. Ծովասարի կողմէն եկող խումբ մը սասունցիներ էին ատոնք, որոնք իրենց հետ ունենալով Կէլիէկուզանի Տէրոտէրը, օգնութեան կուգային. մերոնք առաջին անգամ չեն կրնար զանոնք ճանչնալ և թշնամիներու տեղ ընդունելով՝ հրացանները կը դարձնեն անոնց վրայ։ Կերպով մը կ'իմացուի, որ ատոնք օգնութեան եկողներ են և երբ կը հասնին՝ միացած ուժով կըսկսին յառաջ քալել։ Տղերք կը վերցնեն Մխիթարի և Համբօյի հրացաններն ու զէնքերը, Տէրոտէրը կը հաղորդէ զանոնք և բոլորը միասին ջուրը կը մտնեն դիմացի ափը անցնելու։ Մութը կը կոխէ. թշնամին թէև կը քաշուի, բայց մերոնք ալ իրարմէ բաժնուած լինելով՝ չեն կարողանար նորէն իրար գտնել։ Աւետիս, որ մի քանի զինուորներով բռնած կը լինի Տափըկի ճանապարհը՝ անգամ մ'ալ չ'երևնար. ուրիշ փոքրիկ խումբ մ'ալ անգիտակցաբար կը բռնէ տարբեր ուղղութիւն մը. խմբի երրորդ և ամենամեծ մասը, որ բաղկացած կը լինի 70 հոգիէ, կ'որոշէ բարձրանալ Կուռթըք լեռը և այնտեղէն իջնել դաշտ։ Սմբատ կը պահէ խմբի ետևի մասը։

Սպիտակ կուռթըքը իր ձիւնապատ և սառցապատ փէշերը կը փռէր խմբի ոտքերուն տակ, իսկ լերան կատարներէն փչող կատաղի հիւսիսը իր սարսուռը կը տարածէր խմբի մէջ։ Մէկ կողմէն երեք օրուան քաղցը, միւս կողմէն ցուրտ քամին, որ միայն անխնայ կերպով կը ծեծէր իր առջև գտնուող մարմիններուն, կամացկամաց կը քամէր խմբի վերջին ուժերը։ Վերջապէս, երկու հոգի, սառած ու դադրած, ցած կ'ընկնին ճանապարհի վրայ. ընկերները կը վերցնեն հրացանները ու կը շարունակեն քալել։ Ամբողջ տասը ժամ լերան վրայ թափառելէն յետոյ, առաւօտեան, արշալոյսին, խումբը կը հասնի Սիմ լերան գագաթը՝ Ծիրնկատար։ Անոր առջև կը տարածուէր նոսր մշուշով պատած Մշոյ դաշտի ընդարձակ տարածութիւնը։ Ցերեկով ցած իջնել կը նշանակէր յայտնապէս վտանգուիլ, որովհետև լերան սպիտակ ֆօնի վրայ կատարուող շարժումը դիմացէն դիտողի ուշադրութիւնը պիտի հրաւիրէր։ Այդ պատճառով, հակառակ լերան կատարի ծայրայեղ սառնամանիքին՝ խումբը կ'որոշէ ցերեկը այնտեղ անցնել, մինչև մթնալը։ Սմբատ և Կէլիէկուզանի Տէրոտէրը կ'ուղարկուին Հաւատորիկ հաց բերելու։ Ճանապարհին անոնք կը հանդիպին երկու հաւատորիկցիներու, որոնք անոնց մի քիչ ուտելիք տալէ յետոյ, կը յայտնեն, որ գիւղին մէջ կան 30 թիւրք զինուորներ։ Գիւղացիները տեղեկութիւններ ստանալով խմբի կացութեան մասին՝ անմիջապէս գիւղը կը վերադառնան և իմաց կուտան խմբի գալը։ Կը պատրաստեն բաւական մեծ պաշար և կ'ուղարկեն խմբին։ Մինչ այս, մինչ այն, սառնամանիքէն անկարելի կը լինի խմբին լերան կատարը մնալ, ուստի նա կամացկամաց, աննկատելի կերպով ցած կ'իջնէ, ձորի մը մէջ կրակ կը վառէ և կըսպասէ։ Սմբատ ու Տէրոտէր հեռուէն նկատելով բարձրացող ծուխը՝ կը գուշակեն, որ ընկերներն են, և փոխանակ լեռը բարձրանալու, ուր ժա-

մագիր եղած էին և ուր բարձրանալը բոլորովին անկարելի էր դարձեր իրենց համար, իրենց քայլերը կ'ուղղեն դէպի ծուխը։ Երբ որ ընկերները կը նկատեն զանոնք, հա՜ց հա՜ց պօռալով յառաջ կը վազեն. անոնք կերպով մը կը հանդարտեցնեն իրարանցումի մէջ ընկած ընկերները և յոյս կուտան որ շուտով կըստանան իրենց ուզածը։

Վերջապէս, քիչ ժամանակ անցնելէ յետոյ, հեռուէն, գիւղի կողմէն, կ'երևին երկու շալակաւորներ։ Ատոնք հաց ու ուտելիք բերողներն էին։ Տղայոց ուրախութիւնը անպատմելի էր... Կը բաժանուի հացը և խումբը չորս օրուայ քաղցածութենէն յետոյ, ցամաք հացով փառաւոր ճաշ մը կ'ընէ։ Բայց սովածները մինակ իրենք չէին..., ետևը կային ուրիշ խմբեր, անոնք ալ հաց չունէին... պէտք էր բաժիններէն մաս մը հաւաքել և անոնց ղրկել, որպէս զի քիչ մը ուժ առնեն, գան իրենց հասնին, և տղերքը տին... Մի քանի ժամուան մէջ պաշարը արդէն պատրաստ՝ կ'ուղարկուի։ Ետևը մնացող տղերքը կը հասնին, բայց ի՜նչ... միօրուայ ճամբու տանջանքէն և ցրտէն գրեթէ անճանաչելի և կմախք դարձած։

Խումբը այժմ կը գտնուէր Դաշտին մէջ։

Քոփի կուին քրդերէն սպանուեցաւ 17 և վիրաւորուեցաւ 14 հոգի. իսկ հայերէն գտնուեցաւ մէկ սպանուած, մէկը ծանր վիրաւորուած, որ քանի մը օրէն մեռաւ, և երկու հոգի սառած։

## 11. ԿԸՌԸՇԻԿԻ, ԾՈՎԱՍԱՐԻ ԵՒ ԲԵՐԴԱԿԻ ԿՌԻՒՆԵՐԸ

Երբ կուողներու մէկ մեծ մասը ժողովուրդի հետ կ'ուղևորուի դէպի Դաշտ, Անդրանիկ, Վահան և Գէորգ չտվուշ Սասուն կը մնան, աննաւաճելի լեռները, շարունակելու անհաւասար կռիւը։ Անդրանիկ և Մակար կ'ամրանան Խիպու քարի վրայ. իսկ Գէորգ, Իսօն կը կը բռնեն Սիտոր քարի տակը։ Ապրիլ 22-էն մինչև մայիս 1-ը՝ մեր խմբապետները լերան արծիւներու նման մի-մի քարի վրայ թառած, իրենց տալորիկցի և իշխանձորցի քաջարի զինուորներու հետ՝ կը շարունակեն կռիւը փոխադարձ յաջողութիւններով։

Մայիս 2-ին կռիւը կը փոխադրուի Ծովասարի կողմը. թշնամին անգամ մ'ալ կը բերէ թնդանօթները և կը փորձէ ըմբոստ լեռներուն դէմ։ Բայց անյաջող։

Երբոր մեր զինուորներու խումբը Դաշտ կը հասնի արդէն, Առաքել, Պօղոս և մի քանի ընկերներ կը զետեղուին Բերդակ գիւղին մէջ։ Կառավարութիւնը թշնամուն յատուկ հոտառութեամբ, կ'իմանայ անոնց ներկայութիւնը և 300 զօրքով կը պաշարէ գիւղը։ Կըսկսի խուզարկութիւն և թալան։ Մերոնք դուրս կը նետուին տներէն և կռիւը կըսկսի։ Բերդակցի հայ զինուոր մը, Անդրիկ անունով, երբ կը լսէ կռուի ձայնը՝ դուրս կը նետուի իր տնէն և ճակատ առ ճակատ կը պատահի մի զինուորի. երկուսն ալ կ'ուղղեն հրացանները միմեանց կուրծքին, բայց նոյն վայրկեանին վրայ կը հասնի Անդրիկի կինը, կը յարձակի զինուորի վրայ և բռունցքի հարուածներով կը ծածկէ անոր գլուխը, ակնթարթի մը մէջ կը խլէ հրացանը ձեռքէն և կրսկսի կոթով հարուածներ իջեցնել անոր կուրծքին։ Թիւրքը գլուխը կորսնցուցած, չէ կարող հաշիւ տալ իր հետ կատաբուածի մասին, և տեղացող հարուածներու առջևէն կընկի վրայ յետ-յետ կը քաշուի ու կը ծիծաղի իր անսահման քաջութեան վրայ, որ ազատուեց մի կնոջ ձեռքէն։ Երբ կը տեսնէ որ հրացանն ալ կորսուած է իր համար, կը կանչէ հեռուէն և կ'ըսէ. „Եիտի Թանէ ֆիշէնկ վար իչինտէ" (եօթ հատ փամփուշտ կայ մէջ)։

Հրացանաձգութեան ձայները լսելով՝ Արաղէն, Առաքելոց վանքէն և Հաւատորիկէն զօրքեր կուգան օգնութեան։ Կռիւը կը տևէ մինչև մութ կոխելը։ Մերոնք կը վերցնեն զօրքերէն խլած փամփուշտ, գիտակ ալն ու լեռը կը բարձրանան։ Որովհետև խումբը բաւական մեծ էր գիւղերու մէջ աննկատելի լինելու համար, կը բաժանուի երկու մասի։ Մէկ մասը կերթայ Մկրագոմ՝ Տէրտէրի, Սմբատի, Պօղոսի և Արամի առաջնորդութեամբ։

*(Շարունակելի)*

## ԶԻՆԱԿԻՐ ԽՄԲԻ ԿՌԻՒԸ

Հոկտեմբերի 13-ին Սալմաստի Ս... գիւղից ճանապարհուեց դէպի երկիր մի ձիաւոր զինակիր խումբ, յայտնի Փոխիկի խմբապետութեամբ։ Խումբը բաղկացած էր 15 հոգուց։ Պետոյի, Վարդանի և Խանասորի արշաւանքի ժամանակներից մնացած հայդուկներ էին, որոնք երկար տարիներից ի վեր բնակւում էին Սալմաստում և որոնց գործունէութեան շրջանը Սալմաստն էր իր շրջապատի լեռներով։

Սասունի հերոսական կռիւները, երկրի մէջ տառապող ժողովրդի լացն ու կոծը, ընկերների օգնութեան կոչերը, չէին կարող չ'ազդել կռիւների սովոր հայդուկների վրայ։

Փէդայու մարտասէր ոգին նոր թափով և նոր եռանդով յարութիւն առաւ նրանց սրտերում, և նրանք շարունակ գիմումներ էին անում՝ իրենց երկիր ուղարկելու, որպէս զի իրենք էլ Հայրենիքի Ազատութեան գոնէ իրենց մասը տան։

Երբ խումբը կազմ և պատրաստ էր, տեղական ներկայացուցիչը համառօտակի յիշեցրեց տղաներին, թէ ինչի՛ համար են նրանք գնում, ի՛նչ պարտք ունին կատարելու և ապաջողութիւն ու բարի ճանապարհ մաղթեց։

Հետևեալ օրը խումբը հասնում է Կոթուրի մօտերը, սահմանագլխից երկու ժամուայ ճանապարհ դէպի ներս. տղաները շտապում են, բայց չեն կարողանում հասնել որոշուած դիրքերը, և յանկարծ տեսնում են, որ ձորի մէջ շրջապատուած են թշնամուց։ Անարգ մատնութիւնը արդէն լարել էր իր որոգայթը։ Խումբը նախօրօք մատնուած էր, և կռիւը անխուսափելի էր։

Մամոդ բէկ և Սադըմ բէկ ցեղապետները շրջապատում են ձորը, տղաները հաղիւ հազ կարողանում են իրենց ձգել դիրքերը։ Հաւարը բարձրանում է, հետզհետէ թշնամու թիւը ստուարանում։ Մինչև կէսօր տղաները կռուում են կատաղաբար, մեծ ոգևորութեամբ, բայց երբ կէսօրուայ մօտերին հասնում է զօրքը (մէկ թաբուր), գալիս են այլ ցեղապետներ իրենց կուողներով, Պարսկաստանի Կոթուրի բրդերը և թշնամու թիւը անցնում է 2000-ից, այն ժամանակ մերոնք նկատում են, որ այլևս ոչ մի յոյս չունին ոևէ կերպ իրենց կեանքը փրկելու. որոշում են մինչև վերջին շունչը կռուել անհամեմատ ուժի դէմ։ Կէսօրը անցնում է. տղաներից ոմանք ընկնում են, խմբի ուժը հետզհետէ նուազում է։ Արևը մայր մտնելու մի-

ջոցին քրդերը միահամուռ ուժով յարձակւում են գործում, և տղաները ամբողջ օրը կռւած, թուլացած, վերջին ուժով կրակ են թափում թշնամու վրայ և ընկնում իրենց բռնած անյարմար դիրքերում. ընկնում են քաջին յատուկ մահով, երբեք թիկունք չդարձնելով թշնամուն, ընկնում են կռւելով Հայրենիքի համար, Ազատութեան համար։

Պատմում են շէկ մազերով, կարճահասակ մի ֆէդայու մասին (Մահլամում ապրող Յակովլըն է), որ այդպիսի կռւող երբեք չեն տեսել քրդերն ու զօրքերը։ Րոպէապէս դիրքից դիրք փոխւելով, դիմադրում է բազմաթիւ մարդկանց, պաշտպանում է ընկերների դիրքերը։ Խմբի վալադ քիւրդ Մստօն վիրաւոր ընկնում է իր դիրքում. Նա հաւաքում է իր վերջին ուժերը՝ կռւողին վայել հպարտութեամբ հրացանը ջարդ ու փշուր է անում, որպէսզի իր պաշտելի կրակ ու բոց արձակող ընկերը ողջ-ողջ թշնամու ձեռքը չ'անցնի։ Մստօյին բռնում են կենդանի. ինչպէս պատմում են, նա միայն ասում է. „խնայեցէք ինձ“։ Բայց որովհետև նրա շըրթունքները ոչ մի խոստովանք չեն արտասանում ջանֆիդաների մասին, հանում են նրա ատամները, կտրում են գլուխը և այդօրինակ տանջանքներով նահատակւում յեղափոխական քիւրդ վալադին։

Թշնամուց սպանւել են 37 հոգի, վիրաւորւել՝ 18։

Ցարգանք և փառք ձեզ, անվեհեր քաջեր, սիրելի ընկերներ . . .

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿԸ

## ԲՌՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒԸ

—

*Հայերի կողմից Վանի կուսակալին ուղղած մի պաշտօնական յայտագիր հետևեալ կերպով է նկարագրում Թիւրքերի կատարած գազանութիւնները։*

Անցեալ սեպտեմբերի 25-ին Գաւաշի Նարեկ գիւղին մէջ կարգ մը ֆէդայիներու երևան գալուն հետևանօք, զանոնք ձերբակալելու կամ ոչնչացնելու նպատակով՝ ոստիկանական պաշտօնեայ հարիւրապետ Խալիլ էֆէնտին՝ հռչակաւոր ոճրագործ Ապտիւլ Ղաֆիր և Ոստանցի Խուրշիտ աղաներու և ուրիշ քիւրդերու 10-է աւելի մարտինի հրացաններ և մեծաքանակ փամփուշտ կը բաժնէ և հետևեալ օրն ալ գաւառի կեդրոնին մէջ գտնւող կայսերական զօրքերը և ժանդարմները միասին առնելով՝ ցերեկւայ ժամը 8-ին (ը. թ.) կը հասնի Նարեկ։ Ժամը 9-ին յարձակումը կըսկսի, որու ընթացքի մէջ կանանց. . .ը իրենց ամուսիններուն բանի համբուրել տւող հռչակաւոր բռնակալ Ապտիւլ Համիտ անուն ժանդարմի տասնապետը կըսպաննւի։ Գիշերւան ժամը մօտաւորապէս 1½-ին գիւղացիք գիւղէն կը փախչին։ Չորս կողմէն հասնող քիւրդերուն թիւը կը հասնի 800-ի և անոնց ձեռամբ առաւօտեան մօտ թալանը կըսկսի։ Ոստիկանական պաշտօնեայ Խալիլ էֆէնտիի հրամանով և դրդմամբ՝ Ապտիւլ Համիտ տասնապետին եղբայրը Ապտիւլ Ղաֆիր և Ոստանցի Խուրշիտ աղաներ՝ իրենց 30-է աւելի մարդիկներով գիւղին, վանքին մօտերը և շրջակայ քիւրդ գիւղերու ու ձորերու մէջ և մացառներու տակ պահւըտած գիւղացիները փնտռտուկի կըսկսին։ Ցիշեալ Խալիլ էֆէնտիի աչքին առջև ամբողջ գիւղը թալանի կը տրւի, մէկը վանքին, իսկ միւսը գիւղացի Մահտեսի Վարդանին պատկանող երկու խոտադէզերու կրակ տրւելէ զատ, մեծ և փոքր 102 կտոր շէնքեր կ'այրւին և 11 տարեկանէն մինչև 110 տարեկան 20 անձինք կըսպաննւին և 20-ի մօտ կանայք բռնի կ'անպատւին։ Այս աղեխարշ տեսարանի շարունակութեան ընթացքի մէջ Ապտիւլ Ղաֆիր և իր եղբօրորդիներ՝ Ալի և Խուրշուտ աղաներուն և ուրիշներուն փամփուշտները հատած ըլլալով՝ ոստիկանական պաշտօնեայ Խալիլ էֆէնտիի կողմէն անոնց նոր փամփուշտներ կը բաշխւի և Աղթամարի կաթողիկոսարանի վրայ յարձակելու հրաման կը տրւի։ Այս դէպքերը կը շարունակւին մինչև սեպտեմբերի 27։ Արիւն և կրակ կը շրջապատէ Նարեկը ի մեծ հրճւանս Խալիլ էֆէնտիի, իսկ գաւառիս գայմագամ Լութֆի պէյ բոլորովին աչք գոցելով՝ տեղէն իսկ չշարժիր և տեղի ունեցող այսքան խոշոր վնասներու, բռնաբարութիւններու և չարագործութիւններու կարևորութիւն անգամ չ'ընծայեր և ընդհակառակը դժբախտ ժողովրդին պաշտպանութիւնը կը յանձնէ Խալիլ էֆէնտիին, իսկ այս վերջինը իր կողմէն արիւնռուշտ ոճրագործներուն։ Առաջնորդը անձամբ, ստիպւած եղաւ Ոստանի գայմագամ պէյին մօտ գնալ. դէպքերը մէկիկ մէկիկ պատմելով թախանձագին խնդրել, որ Նարեկ գայ. Նորէն կարևորութիւն չտւաւ. վերջապէս շատ մը դժւարութեամբ տեղէն շարժելով՝ դէպի Կաւաշ ուղևորւեցաւ և Ապտիւլ Ղաֆիրի կատարած շահատակութիւններուն և զոհերուն ականատես եղաւ, բայց և այնպէս այսքան ցաւալի դէպքերու և իրեն օգնական Արմենակ էֆէնտիին ժողովրդին պաշտպանութեան մասին ըրած կրկնակի աղաչանքներուն՝ „աննշան բան է“-ով պատասխանեց, և իրեն հանդիպած ոճրագործներուն պատժելու գործին երբէք չձեռնարկեց, մինչև որ ձեր վսեմութեան կողմէն պաշտօնով ուղարկւած հազարապետ (թապուր աղասը) Հիւսնի էֆէնտին հասաւ։ Մարդասպաններ՝ Վարնդանց գիւղացի Ապտիւլ Ղաֆիր և անոր եղբօրորդին Ալի. Հաճը զիւվէցի Շէյխ Օսմանի որդիներ՝ Մէճիտ, Ապտիւլ Համիտ և Ապտիւլ Խալէգ. Վրկոնիս գիւղացի Հաճը Րաշիտ, եղբայրը Ապտի և տղան Ֆագը Խալիտ. Ստորին Սարիկ գիւղացի Ճապըր, Անկլօր գիւղացի Ամին և Շատւան գիւղացի Ֆագը Խալիտ. Մուշեղ գիւղացի Միւնլայի տղայ Ապտիւլ Ազիզ, որդին Համիտ, եղբայրը Գատիր և Օսման. Պօղոնիս գիւղացի Ֆագը Հիւսէյնի տղայ Ալի և եղբօրորդին. Ըպրիշվանցի Միրզապէյի տղան Իւսուֆ, Մսթաֆա պէյի տղան Ապտալ, Ոստանցի Խուրշիտ աղա և անոր տղան ոստիկան Խալիտ Չավուշ անուն անձեր են։ Ասոնցմէ վերոյիշեալ Խալիտ Չավուշ Նարեկցի Րաշօ քեահիայէն հինգ հատ ոսկի կանխիկ առնելէ յետոյ, զայն առջևը կը ձգէ և կռնակէն գնդակահարելով կըսպաննէ։ Նոյնպէս Նարեկցի Սիմօնեան Պետօյէն բռնութեամբ 150 ղուրուշ կը շորթէ։ Այս չարիքներուն միակ պատճառը եղող նոյն հարիւրապետ Խալիտ էֆէնտին Ոստանի Հիշատ թաղի սուրբ Ստեփանոս եկեղեցին և կառավարութեան շէնքին կից կիսաւեր եկեղեցին և գերեզմանատունը քանդելով՝ դարերէ իվեր հոն թաղւած հազարաւոր մարդկային ոսկրները աղբանոցները նետել տւեց։

## ՍԱՍՈՒՆ-ՄՈՒՇ

*Սասունի եւ Մուշի վիճակին վերաբերեալ մի զեկուցագրի մէջ հետեւեալ տեղեկութիւններն ենք գտնում, գրած դեկտեմբեր ամսին:*

Թիւրք զօրքերի մնալը Սասունի լեռներում նախ քան այնտեղի զօրանոցների կառուցումը և հանդիսաւոր բացումը, ի միջի այլոց այն հետեւանքն ունեցաւ, որ նրանց մէջ երևացին զանազան հիւանդութիւններ, որոնք յետոյ անցան և Մուշ: Սասունից վերադարձած զինուորական մասերի մէջ նկատւում է բաւական մեծ չափով տիֆ, որից կարճ միջոցում մեռան մինչև 250 հոգի: Թիւրքաց զօրքերի այդ վիճակը աւելի վատանում է և այն անգոհացուցիչ պայմաններով, որոնց մէջ նրանք գտնւում են: Վերոյիշեալ հիւանդութիւնը սկսբում յայտնեցաւ Մուշի զինուորների շրջանում, և տեղական իշխանութիւնը կասկածելով, որ դա արդիւնք է զինուորների համար հաց պատրաստող հայ հացթուխների չարամտութեան, շտապեցին դրանցից մի քանիսին բանտարկել, և յայտարարեցին, որ նրանց թխած հացի մէջ իբր թէ խառնուած են եղել առողջապահութեան համար վնասակար նիւթեր: Սակայն ձեռք առած այդ միջոցը գործին էական օգուտ չտուեց, տիֆը շարունակելով զարգանալ զինուորների շրջանում, անցաւ նոյնպէս և քաղաքի հայ ժողովրդի մէջ, որը աւել է աւելի քան 25 հոգ: Մահւան երկու դէպք տեղի ունեցաւ Մուշի բանտում: մեռնողները երկու հայեր են, տեղական յեղափոխական կոմիտէների գլխաւորները, — Միսակ Կոնեկեան և Սարգիս Բալայեան:

Տիֆի երևալը Մուշում՝ իր վրայ դարձրեց Բիթլիսի ամերիկական միսսիայի ուշադրութիւնը, որը շտապեց ուղարկել այնտեղ իր բժշկին, պ. Ռնտերվուտ, յանձնարարելով նրան նոյնպէս և բժշկական աջակցութիւն ցոյց տալ Սասունի հայերին: Բժիշկը այնտեղից ճանապարհ ընկաւ Մուշ՝ նոյեմբերի 3-ին, ուղեկցութեամբ մի ամերիկացի վարժուհու անդամ՝ Բիթլիսի միսսիայի: Դրանից մի քանի օր առաջ այնտեղ էր ճանապարհ ընկել անգլիական փոխ-հիւպատոս պ. Թըրըլ, որը, տեղեկութիւններին նայելով, այժմ արդէն վերադարձել է Մուշ և Սասուն կատարած իր ճանապարհորդութիւնից, որը նա ձեռնարկել էր գործերի վիճակին ծանօթանալու համար: Իսկ Թիւրքաց կառավարութիւնը, ինքը շատ քիչ հետաքրքրած լինելով հայերի վիճակով՝ մեծ կասկածով է վերաբերում դէպի այն բարեգործական գործունէութիւնը, որը վերև յիշած ամերիկական միսսիան ցոյց է տալիս Մուշի և Սասունի հայերին, ուղարկելով այնտեղ կարօտներին բաժանելու համար՝ մօտ 260 օսմանեան ոսկու հաց և շոր:

Այսպիսի պայմաններում, ամերիկական միսիոնարները, իրենց ձեռնարկները իրագործելիս, հանդիպում են մի քանի դժուարութիւնների և արգելքների թիւրքաց իշխանութեան կողմից, որը համոզուած է, թէ թիւրքաց կառավարութեան հոգատարութիւնը Սասունի հայերի վերաբերմամբ միանգամայն բաւարար է և ուրեմն կողմնակի օգնութիւնը աւելորդ է: Այսպիսի կարծիք ունենալով հայ ազգաբնակութեան վիճակի մասին, Մուշի կառավարութիւնը առիթ չէ բաց թողնում՝ ամենախիստ միջոցներ գործ դնելու հայերից հարկեր հաւաքելու ժամանակ, և երբ նրանք բաւականաչափ դրամական միջոց չեն ունենում, աճուրդով վաճառել է տալիս, ինչպէս նրանց նոյնպէս և տնային անասունների համար անհրաժեշտ ձմեռուայ պաշարը:

Մուշի դաշտի հայերից հարկեր հաւաքելու գործում, Մուշի միութեսարիֆը բաւական աջակցութիւն գտաւ յայտնի Իգէթ-փաշայի կողմից, որ երկար ժամանակ, ժանդարմների գնդի հետ միասին, վերև յիշած շրջանի գիւղերում մնալով, պտոյտներ գործելով և խուզարկութիւններ անելով, հասաւ այն կէտին, որ Բիթլիսի ազգաբնակութեան մէջ աւելի և աւելի հաստատուեց այն կարծիքը, թէ շնորհիւ այդ փաշայի ձեռք առած միջոցներին, հայ յեղափոխականները երկու և կէս ամսից իվեր անհետացել են Մուշի հովիտից ու շրջականներից:

## ԱՂԹԱՄԱՐԻ ԿՌԻՒԸ

*Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին ուղղուած մի ավաշտօնական տեղեկագրից քաղում ենք հետեւեալ հատուածները Աղթամարի յեղափոխական կուի մասին:*

Աղթամար, 15 օգոստոս 1904

Մեր 1702 համար յուլիս 24 թիւ գրութեամբ ամենապատիւ սրբազնութեանդ տեղեկագրուած Նարեկ գիւղին մէջ միևնոյն ամսոյ 20-րդ օրը տեղի ունեցած յեղափոխականներու դէպքին վրայ, Նահանգիս վսեմ. կուսակալին յատուկ հրաւէրով, սոյն յուլիս ամսոյ 27-ին Վան գնացինք: Քանի մ'օր անդ մնալէ, և անկէ Հայոց Ձոր իջնալով, տեղւոյն վանական կարգ մը խնդիրներ կարգադրելէ վերջ, օգոստոս ամսոյ 8-ին յԱղթամար վերադարձին՝ լսեցինք թէ դարձեալ Մուշէն հալածական 53 հոգիէ բաղկացեալ խումբ մը յեղափոխականներ, Բաղէշի Դատման գիւղէն նաւեր նստելով Աղթամարայ կղզին եկած են ծածուկ, և թէ Աղթամարայ կղզին պաշարելով, զանոնք նաւաձելու համար զօրք, թնդանօթ և ոստիկաններ ճամբայ հանած են Վանէն: Նոյն օրը մենք տակաւին Առտոն չհասած, յեղափոխականները ձերբակալելու ու փաճացնելու պաշտօն ունեցող վիլայէտի ոստիկան զօրաց հրամանատարը ճանապարհին մեզ հասնելով տեղեկացուց թէ վսեմ. կուսակալի հրամանաւ պէտք է իրենց հետ մնանք, մինչև որ խնդիրը վերջաւորութեան մը յանգի: Քիչ վերջ Վանէն հասնող հարիւրէ աւելի զօրաց և թնդանօթի մը հետ Կաւաշու Գարատաղ գիւղի ծովեզերեայ ստորոտ, Զարմանիհր անուն թերակղզին գացին բնակելու, որ կը գտնւի դէմ յանդիման Աղթամարայ կղզիին: Մենք գաւառիս գայմագամին հետ յիշեալ գիւղը մնացինք:

Յաջորդ երկուշաբթի օրը ծովը չափազանց խռովուած ըլլալով, գործի չձեռնարկեցին. իսկ ամսոյս 10-ին երեքշաբթի օրը թնդանօթը նաւի մը մէջ զետեղելով ռմբակոծել սկսեցին կղզին, որմէ յեղափոխականներն ալ հրացաններով կը դիմադրէին: Նոյն օրը ութ թնդանօթ պարպեցին, իսկ յաջորդ օր քսանևեօթ:

Աղթամարի վրայ ուղղուած թնդանօթի առաջին հարուածը որոտալուն պէս՝ խորին յուսահատութեան մատնեցաւ ժողովուրդը, այնպէս որ շատերը դարձեալ լեռները ու քիւրդաբնակ գիւղեր ապաստանեցան պահպանելով: Ռմբակոծութեան երկրորդ չորեքշաբթի օրը վսեմ. կուսակալը և վսեմ. հրամանատար փաշաներն ալ կարգ մը սպաներով ի միասին, Մանճիհրի թերակղզին եկան և յեղափոխականներու փաճացման ազդու հրամաններ տալէ յետոյ մեկնեցան կրկին դէպի Վան:

Կղզիի անառիկ դիրքը ստանալէ զկնի, որոշեցին Կարինէ Աբնաջեշին Սէեար անուամբ մեծ ու Վանէն 3-4 ուրիշ փոքրիկ թնդանօթ բերելով թէ ցամաքէն և թէ ծովէն բուռն ռմբակոծութեան ենթարկել զայն: Բայց հինգշաբթի լուսնալու գիշեր յեղափոխականներ խոյս կուտան կղզիէն, հակառակ զօրաց ծովային խիստ հսկողութեան:

Այս զարհուրելի դէպքին ատեն կղզիին մէջ բացի յեղափոխականներէ, կը գտնուէին հետևեալները.—Գերաշնորհ Տ. Յովսէփ սրբազան, Տ. Դանիէլ, Տ. Պօղոս Տ. Ներսէս սրբազաններ, վարդապետներ, ժամանակաւոր աշակերտներ, 5-6 ծառայողներ, որոնք անխուսափելի մահւան տագնապին ներքև կիսամահ եղած էին: Վանի

մէջ յեղափոխականներու գրաւած նաւերը վաճառականական ապրանքներով բերցուած ըլլալով՝ Աղթամարէն խոյս տուած ատեն ապրանաց մեծագոյն մասը նաւով իրենց հետ կը տանէն կրկին, իսկ մնացեալ փոքրիկ մասը, փակելէ և ուզածնին վերցնելէ յետոյ, անգործածելի վիճակի մատնած տարբեր նաւի մը մէջ կը լեցնեն, որ յետոյ կառավարական պաշտօնէից հսկողութեան ներքև մնաց:

Ութ-տասը օրէ իվեր վանքին մէջ լեցուած 30 զօրքերու, ոստիկաններու, սուարաթիւ քիւրդերու՝ հացի, իւղի, պանրի, ոչխարի, գարիի, խոտի և նմանօրինակ բաներու կողմանէ Աթոռին տրուած վնասը, որ եթէ հաշուոյ առնուի մօտաւորապէս 300 ոսկւոյ գումարի մը կը յանգի: Եւ առ 33 հոգիէ բաղկացեալ մէկ գունդ զօրք ալ տեղս հասաւ այսօր Վանէն. կցցին պիտի բնակին յետ այսօրիկ:

- Այս ցաւալի իրողութիւններէն շատ դիւրին է կռահել այս թշուառ աթոռի ներկայ խեղճուկ կացութիւնը, քանի որ զօրք լեցուեցաւ ներսի տուն, կը վախնամ որ միաբանութեան աշակերտներէն շատերն ալ հեռանան անկէ և աթոռը աւելի տխուր վիճակի մատնուի: Ժողովուրդը մինչ ցարդ խաղաղ և ապահով է թէպէտ, բայց ո՞վ գիտէ թէ ապագան ինչ պիտի լինի:

Ծանուցանելով ամենապատիւ սրբազնութեանդ զայսոսիկ ի գիտութիւն և աղիողորմ ճար և դարման խնդրելով:

*(Ստորագրութիւն)*

## ՏԵՂԵԿԱԳԻՐ
## ԽԱՐԲԵՐԴԻ ՇՐՋԱՆԻ

*(Շարունակ. № 2-ի)*

Խարբերդ, $^{8}/_{21}$ մայիս

Հայերու խնդիրը հազիւ վերջ գտած, նոր ձերբակալութիւն մը սկսաւ Թիւրքերու կողմէն: Ասիկա կերպով մը կարելի է առջի խնդրին շարունակութիւնը սեպել, տեսէք թէ ի՞նչպէս:

Արդէն խօսեցանք, թէ Նադրի պէյ անաչառ և ուղղամիտ ընթացքի մը հետևեցաւ հայերու դատավարութեան միջոցին, ինչ որ բնականաբար դէշ կերպով դիտուեցաւ կարգ մը պաշտօնեաներու կողմէ և ատելութիւն հրաւիրեց: Նադրի պէյ խիստ զարգացած անձնաւորութիւն մըն է և կ'արժէ իր կենսագրութենէն քանի մը շահեկան մասեր դնել հոս: Ծնած է Լիբանան լեռը և հիմա 83 տարեկան է. իր նախնական ուսումը առած է ծննդավայրին մէջ և յետոյ հետևած է Կ. Պոլսոյ Կալաթա սէրայի Լիսէի ընթացքին և Միւլքիէի վարժարանին (քաղաք. վարչութեան): Կ. Պոլսոյ և Պէյրութի մէջ իր հրատարակած արաբերէն և թիւրքերէն հեղինակութիւնները կը վկայեն թէ միևնոյն ատեն գիտուն մը ու գրագէտ մըն է. գիտուն՝ իբրև մաթիմաթիկագէտ և գրագէտ՝ իբրև խմբագիր: Ճամբորդած է Եւրոպա, Ասիա և Աֆրիկէ, և այդպէս այլևայլ թեմականներուն հրատարակած է Կ. Պոլսոյ մէջ՝ թիւրքերէն լեզուով „Իմտատ իւլ Մտատ“ — Մելանի օգնութեան անուն գրական և գիտական հանդէս մը՝ աշխատակցութեամբ հանգուցեալ նշանաւոր Մուալլիմ-Նաճիի, Շէյխ Վասֆիի՝ հիմա գրականութեան պրօֆէսօր „Դատաւորաց դպրոց“ի մէջ և Ապտիւլ-Քէրիմ Սապիթ պէյի՝ հիմա ընդհ. հիւպատոս: Հրատարակած է նաև ուրիշ արաբերէն և թիւրքերէն հանդէս մը՝ „Քէվքէպ իւլ իւլում“ աշխատակցութեամբ Մ. Մանսուր պէյի՝ հիմա ելևմուտից նախարարութեան մէջ իբրև խորհրդական և ուրիշ համբաւաւոր անձնաւորութիւններու: Հրատարակելով և խմբագրելով այսպէս Կ. Պոլսոյ և Գահիրէի մէջ թիւրքերէն և արաբերէն թերթեր, Վառնայի մէջ Courier de Varna-ն, Սօֆիայի մէջ Bulgarie libre և թէ երիտասարդ Թիւրքիոյ խնդիրը, ատեն մըն ալ թղթակից եղած է ֆրանսերէն թերթերու, որոնց մէջէն անուանենք Le Bosphore Egyptiene-ը: Խորապէս հմուտ թիւրքերէնի և արաբերէնի, գիտնալով նաև անգլիերէն ու ֆրանսերէն լեզուները, ինչպէս նաև տեղեակ պուլկարերէնի՝ որոշած էր, որչափ ատեն որ Թիւրքիա խաղալիք էր այս ցոփ վարչութեան, ապրիլ օտարութեան մէջ, բայց բռնապետին ծանօթ մօտային համաձայն, Նադրի պէյ կանչուեցաւ Պոլիս, կեղծաւորաբար վեհանձն երևցող սուտ խոստումներով, և քիչ մ'ատեն հիւր մնաց պալատը, ուր բանդատուեցաւ կայսեր սենեկապաններէն՝ վաղածանօթ Ֆուբբրիներէն մասնաւոր մուրհակ մը ստորագրելու, որով խալիֆային սուրբ բերնէն ելած ամէն առաջարկ սիրայօժար կ'ընդունէր: Ճշմարիտ է թէ ատեն մը Նադրի պէյ առարկայ եղաւ արժանաւոր վարձատրութեանց, վարելով կրթական-տեսուչի և գայմագամի պաշտօններ, բայց իր ապականեալ պետին քմահաճոյքներուն չի ծառայելով՝ ամբաստանուեցաւ իբրև ապստամբութեան գրգռիչ ու առանց քննութեան, առանց իրեն հարցում մը, բառ մ'իսկ ուղղուած ըլլալու՝ պետական և նախարարական ժողովներու որոշման համաձայն՝ խալիֆային հրամանով աքսորուեցաւ Տիգրանակերտ, ուր վկայ եղած է հայերու արդէն ծանօթ ջարդերուն: Արիւնի այս օրերուն՝ քիւրդերը ասօրաբնակ Խըդըլպըլ գիւղէն — որ Տիգրանակերտի մօտն է — ընտանիքով հարիւրի չափ կոյսեր առևանգած էին, թալլելով ու կրակի տալով գիւղը: Պոլսոյ դեսպանները կը պահանջէին կառավարութենէն գտնել և իրենց տէրերուն ետ դարձնել այդ կոյսերը: Կառավարութեան կողմէն այս գործին համար շատ մը պաշտօնեաներ նշանակուեցան, որոնք քիւրդ գիւղերն երթալով պիտի հետախուզէին այդ առևանգուած կոյսերը և ետ պիտի առնէին զանոնք. սակայն այս ամէնուն ալ պաշտօնը արդիւնք մը չունեցաւ, հաւանականաբար անոր համար որ կամ կաշառք առին քիւրդերէն և կամ վերջապէս չուզեցին օգտակար ըլլալ: Այն ատեն անգլիական և ֆրանսական հիւպատոսներու պնդումներուն վրայ — որոնք իրենց կողմէն Նադրի պէյը կը ներկայացնէին այս գործին իբրև վստահելի անձնաւորութիւն — կառավարութիւնը ստիպուեցաւ տեղի տալ կոչում ընելով Նադրի պէյի կորովին, որ քաղաքէն հեռու քէօշկի մը մէջ կը բնակէր հանգիստ, հեռու գտնուելով համիդական ամբաստանութիւններէն, բայց Նադիր պէյ՝ խորապէս վստահ թէ յաջողութեան և անյաջողութեան երկու պարագային ալ թշնամանքի վտանգը կըսպառնար իրեն՝ մերժեց ընդունել այդ առաջարկը, սակայն կուսակալի քրիստոնեայ օգնականը, որ անձնապէս յատուկ այս գործին համար քէօշկ գացած էր և որ Նադիր պէյի մտերիմ բարեկամն էր, խաբուած իր կարգին կառավարական կեղծ խոստումներէն՝ պնդեց, որ իր առաջարկն ընդունի իր բարեկամը, քանի որ իր աքսորը շատ երկարած էր: Վիճաբանութենէ ետք, Նադրի պէյ ակամայ ընդունեց այդ պաշտօնը և գնաց քիւրդերու գիւղերը, հոն գտաւ դժբախտ կոյսերուն պահուած

տեղերը, նոյնիսկ ձեռք բերաւ այն մարդիկը, որ այդ կոյսերուն փափաքին համաձայն՝ թոյն տարած էին անոնց, որպէս զի ազատեն քիւրդերու ծանականքէն, ինչպէս նաև ձեռք բերաւ կարգ մը դեղեր, որ գաղտնօրէն բերել տուած էին վիժել տալու համար բռնութեամբ յղացուած անհարազատ զաւակներ։

(Շարունակելի)

# ԲԱԳԻՒԻ ԴԷՊՔԵՐԸ

(Շարունակ. № 3-ի)

Երեքշաբթի, փետրուարի 8-ը լուսացաւ մեզ համար ուրախառիթ պայմաններում—մենք ուժեղ էինք և կարող էինք դիմադրել։ Վաղ առաւօտեան մեր բռնած տներից մէկը արհեստանոց դարձրինք և կարգի բերինք մեր հրացանները։ Մի կողմից ռազմամթերք էր հաւաքւում, միւս կողմից անընդհատ տեղում էր մերոնց հրացանաձգութիւնը, և խուժանը անակնկալի եկած, սարսափահար փախչում էր...

Այդ ժամանակ էր, որ ականաւոր մահմէտականների մի խումբ շտապեց Նահանգապետի մօտ և յորդորեց „բարը շլեգ“, հաշտութիւն կայացնել։

Նահանգապետը իջնելով Անանիա եպիսկոպոսի մօտ, առաջարկում է նրան՝ դիմել հայերին. „Թիւրքերը, ասում է նա, երդւել են զազիի մօտ, որ կը դադարեցնեն կռիւը, եթէ հայերը ևս նոյնը անեն“։ Միաժամանակ Նահանգապետը դիմում է անում ուրիշ ականաւոր հայերի ևս, հրաւիրելով նրանց հաշտութեան...

„Կոմիտէի“ ուրուականն էր, որ առաջ բերեց այդ յանկարծակի փոփոխութիւնը...

Իսկոյն մի պաշտօնական նամակ ուղղեցինք եպիսկոպոսին, յայտնեցինք, որ մինչ այն մենք նախայարձակ չէինք եղել, այլ միայն պաշտպանողական դիրք էինք բռնել, որ մենք պատրաստ ենք զէնքը ցած դնել, եթէ թիւրքերը նոյնը անեն։ Աւելացրինք, որ „ստիպւած ենք աւելի խիստ միջոցներ գործ դնել, եթէ թիւրքերը շարունակեն“։ Եւ մերոնց հրահանգեցինք ժամանակաւոր զինադադար։

Բայց ահա լուր բերին, թէ թիւրքերը Բազարնայա փողոցի վրայ խանութները աւերում ու թալանում են։ Մենք տեսանք, թէ ինչպէս խուժանը մրջիւնների պէս ներս էր խուժում խանութները, յափշտակում, տանում ու տեղաւորում, և նորից ներս վազում. նրանք մրցում էին իրար հետ, գլուխներ էին ջարդում։ Մերոնք դուրս նետուեցին իրենց դիրքերից և մի այնպիսի դաս տւին թալանողներին, որ այլևս այդ կողմերում թիւրք չերևաց։

Հետաքրքիրն այն է, որ երբ մեր զինուորները սկսեցին քշել խուժանին, զօրքը, որ մինչ այն լուռ հանդիսատես էր այդ աւազակութիւններին, դարձաւ դէպի մերոնց և մի քանի զալպ տւեց։ Ցղերքը, իհարկէ, խոյս տւին ընդհարումից և անյայտացան։

Պէտք էր շատացնել հրացանները, իսկ մեր պահեստը հեռու էր և անվտանգ բերելը անհնարին։ Այդ նեղ ժամին մեր առջև յայտնւեց մի հայ զինուոր, մի խեղճ ու կրակ մարդ, որ իր մտքերը հապիւ էր կարողանում արտայայտել։ Փորձի համար առաջարկեցինք նրան գնալ մեր պահեստը և բերել մէկ հրացան։ Գնաց և աջողութեամբ բերեց մէկը։ Նորից գնաց և բերեց էլի մի քանիսը։ Ոգևորւած՝ մեր բուռն երախտագիտութիւնն էինք յայտնում նրան, բայց նա կարծես չէր լսում, առանց մի խօսք արտասանելու հեռացաւ... Մի անգամ ևս վիճակւեց տեսնել պարտքի այդ անխօս զինուորին. մի խեղճ հայ մարդ պատմում էր նրան, որ կրակը լափում է իր տունը, որ երեխաները բարձրացել են կտուրը և պիտի այրւին, եթէ շուտ օգնութիւն չհասնի։ Զինուորի աչքերը լցւեցին արտասուքով, նա գնաց այդ մարդու հետ։ Երեխաները ազատւեցին։ Զգիտեմ, էլ ի՞նչ եղաւ, ո՞ւր գնաց զինուորը...

Երեկոյեան արդէն կազմ ու պատրաստ՝ մենք տէր ենք քաղաքի մի մասին։ Քաղաքը ներկայացնում էր իրօք պատերազմի դաշտ, դիակները շարունակ թափւում էին փողոցներում։

Կօզակները շարունակ հետամուտ էին լինում մեզ զինաթափ անելու դիտաւորութեամբ. այդ լիրբ ու անամօթ վարմունքը մեզ կատաղեցնում էր, բայց հնար չունէինք բողոքելու... Մեր շարժումները աւելի ազատ ու համարձակ էին երբ մութը կոխում էր։

Երեքշաբթի երեկոյեան լուր բերին մեզ, թէ այրւում է Բաբաջանեանի տունը. հրշէջների խումբը անյայտացել էր։ Տունը կրակից ազատելու հնարաւորութիւն չունէինք. ի՞նչ էին եղել նրա միջի մարդիկ... Ենթադրում էինք, որ կօզակները ազատել ու տարել էին ինչպէս և Ասլանեանի այրւած տան բնակիչներին։ Սարսափելի իրողութիւնը մենք միայն վերջը իմացանք։ Թիւրք խուժանը շրջապատել էր այրւող տունը և հրճւում էր իր սխրագործութիւնների վրայ... Մտածեցինք մի լաւ պատժել նրանց։ Մեր երիտասարդները զինւած մօսինի հրացաններով՝ դիմեցին դէպի կրակը։ Գիշերը խաղաղ, լսւում էր միայն վայրենի ամբոխի հոնդիւնը։ Մերոնց մի մասը բռնում է ճանապարհը, 2 թիւրք սպանելով, միւսները կրակում են իրենց հրացաններով։ Աշնանային տերևների պէս թափւում էին թիւրքերի դիակները։ Մի քանի զալպ—և փողոցը իսպառ մաքրւում է։ Այնուհետև մերոնք ամրացնում են և Հայոց փողոցը, ուղարկելով այնտեղ զինւած մի խումբ։

Այդ միջոցին յայտնւեց մօտ քառասուն տարեկան մի հայ, գունատ, սարսափահար, դողդոջուն։ Պատմեց, որ հրդեհը ընկել է և իր բնակարանը, որ թիւրքերը պաշարել են տունը և որ երեխաները, հարևան տան կտուրը բարձրացած, պիտի շուտով այրւին։ Պատմութիւնը չափազանց յուզիչ էր և մի ուրիշ խումբ իսկոյն ուղարկւեց պաշարւածներին օգնութեան։ Մեզ սաստիկ զարմացրեց, որ երբ այդ մարդուն առաջարկեցինք խմբի հետ գնալ և ցոյց տալ երեխաների տեղը, նա հրաժարւեց։ Այրւող տների բոցը լուսաւորում էր շրջակայքը. մերոնք հասնում են կրակի մօտերքը. նրանց առջև պատկերանում է մի սոսկալի տեսարան։ Բազմաթիւ տների ընտանիքներ, մէկտեղ հաւաքւած, բոպէ առ բոպէ սպասում էին մահւան։ Ծուխը լցրել է և խեղդում է նրանց սենեակների մէջ, դուրս գալ անհնարին էր, դուրսը սպասում էր գազանացած ամբոխը։ Բայց ահա յանկարծ լսւում են հրացանի զալպեր և թիւրքերը գլուխները կորցրած, սկսում են փախչել։ Պաշարւածների դէմքերը վայրկենաբար փայլում են ուրախութեամբ, նրանց թւում է, թէ զօրքն է օգնութեան հասել, բայց չէ՞ որ երկու ժամ առաջ ոստիկանապետը եղել էր այդտեղ 50 կօզակներով և ոչինչ չէ արել, չնայած հայերի աղաչանքներին։

Տղերքը իսկոյն մաքրում են փողոցը և ներս են մտնում. Թշւառ բազմութեանը անհաւատալի է թւում, որ եկողները հայեր են, նրանք գրկում ու համբուրում են իրենց փրկարար հրեշտակներին... Անկարելի էր թողնել անպաշտպան զոհերին,—մեր խումբը վերցրեց բոլորին, կին, ծեր ու երեխայ, թւով մօտ 100 հոգի, և տարաւ դէպի աւելի ապահով տեղեր, հայոց եկեղեցու կողմերը: Այդ պարտականութիւնը ևս աջողութեամբ կատարելուց յետոյ տղերքը առանց մի զոհ տալու վերադարձան դէպի մեր սահմանները, զւարթ դէմքերով. „կեցցէ Դաշնակցութիւնը“ աղաղակելով:

Այն փողոցը այլևս Թիւրք չգնաց:

Լուր տւին, թէ Թիւրքերը Նիկօլայեվսկայա փողոցի ծայրերին սպանութիւններ են կատարում և սպառնում են տներ այրել: Մի ուրիշ խումբ ուղարկւեց դէպի այդ կողմերը, ամբոխին քշելու և միւս օրւայ համար դիրքեր գրաւելու նպատակով: Սպասւում էր, որ միւս օրը խուժանը պիտի արշաւէր Չեմբերեքէնտից դէպի Նիկօլայէվսկայա փողոցը:

Չորեքշաբթի օր կայծակի արագութեամբ տարածւեց քաղաքի մէջ, թէ գիշերը հայ խմբերը աջողել են փախցնել Թիւրք խուժանին, մեծ զոհեր պատճառելով նրանց, որ նրանք ազատել են հրդեհից բազմաթիւ ընտանիքներ: Ամէն կողմից պաշարւածները անձկութեամբ սպասում էին այդ ազատարար խմբերին. բայց ի՞նչպէս գտնել նրանց, ու՞ր դիմել... Նրանք, որոնք փոքրիշատէ ծանօթ էին կազմակերպութեան, այլևայլ միջոցներով տոմսակներ էին ղրկում մեզ և օգնութիւն աղերսում: Աննկարագրելի է այդ տոմսակների մէջ արտայայտւած սոսկումը: Մեր սիրտը մորմոքում էր, որ չէինք կարող գոհացում տալ բոլոր դիմումներին:

Ուշադրութեան արժանի է նոյն առաւօտ ստացւած մի քահանայի նամակը. կղերական անշարժ ու ստրկամիտ բանակից էր նա, որ միշտ պարսաւանքով է խօսել մեր լաւագոյն երիտասարդութեան ազատագրական ճիգերի մասին, այժմ ո՛րպիսի յուզիչ տողեր է ուղղում մեզ. „Համբուրում եմ հայ քաջերին, արտասուքս չեմ կարողանում պահել, երբ յիշում եմ նրանց անձնազոհութիւնը, աղօթում եմ, որ Ամենաբարձրեալը ուժ ու կարողութիւն պարգևէ նրանց“ ևայլն:

Չորեքշաբթի առաւօտեան՝ էլ այնպէս համարձակ չէին երևում Հայոց փողոցում և զբաղւած էին իրենց դիակները հաւաքելով: Գիշերը հաղորդել էին մեզ, որ առաւօտեան Նիժեգօրօդսկի գունդը պիտի գար ու կրակեր ամբոխի վրայ: Պատւիրել էինք մերոնց, առհասարակ դիրքերից կրակ չ'անել և հետամուտ լինել Թիւրք ամբոխին, երբ նա կը փորձէ յարձակում գործել: Չորեքշաբթի առաւօտեան մերոնցից մի քանիսից փողոցում խլել էին ատրճանակները... այդ այն ժամանակ, երբ Շեմախինկում խուժանը շարունակում էր թալանն ու վայրագութիւնները: Ոմանք առաջարկում էին ռումբեր նետել՝ թէ Թիւրքերի և թէ կօզակների վրայ: Եւ մինչ այդ հարցը ծեծւում էր ընկերների մէջ, հաշտութեան Լուրը եկաւ...

Բարըշըը՛գ... աւետաբեր լուրը արագութեամբ շրջան արաւ քաղաքում. չորս օրւայ ահռելի կօշմարից մթագնած դէմքերը փայլեցին ուրախութեամբ. բայց դեռ երկիւղն ու անվստահութիւնը տիրում էր հայ ու Թիւրք շրջաններում... Մեր առջևից անցնում էին Թիւրքերը զինւած բերդանկաներով ու ատրճանակներով: Ինչո՞ւ զէնքը վայր չէք դնում, հարցնում ենք նրանց. „Ոչի՛նչ, պատասխանում են, յարձակւելու համար չէ, այլ պաշտպանւելու, մենք վախենում ենք հայերի յարձակումներից“: Ուշագրաւը այն է, որ այդ զինւած Թուրքերին առաջնորդում էին կօզակներ ու ստրաժնիկներ:

Քաղաքը ներկայացնում էր մի անօրինակ տեսարան: Ծխացող տներ, փշրւած կահ կարասիք, փողոցների մէջ ցիր ու ցան ընկած անվերջ դիակներ, անդամահատւած կանայք, ածխացած երեխաներ և սիրտ կտրատող լաց ու աղաղակ... Եւ այդ բոլոր գազանութիւնները կատարւած, ի հարկէ, Թիւրքերի ձեռքով: Ո՛րպիսի ուշագրաւ հակադրութիւն: Մենք մեր կողմերում թոյլ չտւինք թալան ու հրդեհ: Թիւրք խանութպանները ապշած նայում էին իրենց խանութներին,—ամէն բան տեղն է, ոչինչ չէ տարւած և չէ աւերւած: Ասում են, որ նոյն օրերին խանութպան Թիւրքերից մի քանիսը ցանկութիւն էին յայտնել մեր կազմակերպութեանը տուրք տալու, որովհետև թոյլ չէինք տւել իրենց խանութները աւերելու, բայց դա անշուշտ վայրկենական մի ցանկութիւն է եղել... Թշւառականները դեռ շարունակում են գործիք լինել ոստիկանութեան ձեռքում. Թէ չէ՝ ինչպէ՞ս բացատրել, որ տեղական մի լրագրում տպւած անթիւ շնորհակալութիւնները միմիայն հայերի կողմից են Թիւրքերի հասցէին, Թիւրքական շնորհակալութիւնները բացակայում են: Պէ՞տք է արդեօք յիշել, որ հայերի կողմից ուղղւած այդ անվերջ երախտագիտական նամակները յաճախ զզւանք են յարուցանում...

Տագնապը անցաւ, մենք մի քանի օր ևս մնացինք մեր դիրքերում և ապա ցրւեցինք: Այստեղ վերջանում է մեր կռւի պատմութիւնը: Չզլանանք մեր բուռն հիացմունքը յայտնել մեր զինւորներին, որոնք անվեհեր Դումանի ղեկավարութեամբ կռւեցին առիւծի պէս: Մարդիկ, որոնք անվախ գնում էին կրակի ու գնդակի առաջ, հաւատացած, որ մի քանի վայրկեանից յետոյ այլևս ողջ չպիտի մնան... [1]:

## ՄԱՐՏԻ ԴԷՊՔԸ

23 Մարտի

Խաղաղութեան օրերը, տարաբախտաբար, դեռ շատ հեռու են: Չկայ վստահութիւն, չկայ հաւատ դէպի „կարգի պահապանները“: Չնչին մի դէպք անգամ ընդունակ է վրդովելու ամբողջ քաղաքը: Ահա դրա մի ապացոյցը՝ քաղւած կովկասեան մամուլից.

„Երէկ, մարտի 22-ին կէսօրից յետոյ ժամը $2^1/_2$-ին, Բագուն մի ակնթարթում ընդունեց պատերազմական դրութիւն. խանութները սկսեցին մէկը միւսի ետևից փակել և ամէն մարդ դէպի տուն էր փախչում: Քաղաքի բոլոր ծայրերում նոյն լուրն էր թռչում կայծակի արագութեամբ. „Հայերը սպանութեան փորձ արին պրիստաւ Մամէդ-բէգօվի վրայ, պրիստաւը վի-

1) Պարտք ենք համարում յիշել, որ մեզ հասած առաջին լուրերը չափազանցւած էին: Զոհերի ճիշդ թիւը հայերի կողմից՝ 179 է. վիրաւորներ՝ 43: Թիւրքերինը յայտնի չէ ճիշդ: Ցուցակագրւած են 95 սպանւած եւ մօտ 30 վիրաւոր (կան շատ թաքցրած դիակներ: Չափազանցւած է նոյնպէս եւ մեր զինւորների թիւը:
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

բաւորւած է, հայերից մէկը սպանւած, իսկ միւսները վիրաւորւած։ Այս լուրը տարածում էին մի քանի խումբ թիւրքեր, վազելով դէպի քաղաքի զանազան ծայրերը և ստիպելով թիւրքերին փակել խանութները։

„Ամբոխային սարսափը իր գագաթնակէտին հասաւ ժամը 4-ին։ Թիւրք սրիկաների զինւած խմբեր սկսեցին ման գալ մեծ փողոցներում, զոյգ զոյգ նստած կառքերի մէջ և աջ ձեռքերը գրպաններում պատրաստ՝ ամեն լոպէ ատրճանակները դուրս հանելու համար։ Ժամը 5-ին զինուորներն ու կօզակները արդէն բռնած էին քաղաքի զանազան մասերը։ Նոյն իսկ մի քանի թնդանօթներ սկսեցին երևալ քաղաքի կենտրոնում։ Չնայած այն բոլոր միջոցներին, որ ձեռք էր առած զինուորական վարչութիւնը, ժողովուրդը հանդարտացնելու համար, խանութները մնացին փակ և վրայ հասնող գիշերւայ խաւարը մեռելային լռութեամբ ծածկեց մեր չարաբախտ քաղաքը։ Մարտի 22-23-ին գիշերը անցաւ խաղաղ. սպանութեան դէպքեր չը պատահեցին, բայց տպաւորութիւնը չափազանց ճնշող էր։ 23-ի առաւօտ մարդիկ սկսեցին դուրս գալ տներից և քաղաքը սկսեց առնել իր սովորական կերպարանքը։ Շուկայում ամեն մարդ հանդիպողին հարց ու փորձ էր անում իմանալու համար նախորդ օրւայ դէպքերի մանրամասնութիւնները։

„Ականատեսները պատմում են հետևալ ձևով։ Ժամը 2-ին քաղաքային պարտէզում նստած են եղել 2 հայ երիտասարդներ. պրիստաւ Մամէդբէգովը իր հետ ունենալով մի քանի ոստիկաններ և 10-15 թիւրք երիտասարդներ, մօտենում է նրանց և առաջարկում հետևել իրեն. երիտասարդները հետևում են պրիստաւին և շրջապատւած ինքնակոչ թիւրք ամբոխով, գնում են դէպի ոստիկանատուն։ Նոյն միջոցին պարտէզի միւս ծայրից ոստիկանները և թիւրք ամբոխը բռնում են ուրիշ 2 հայեր ևս և բերում դէպի ոստիկանատուն։ Հազիւ մօտենում են ոստիկանատան դրանը, ետևի թիւրքերը սկսում են կրակել բռնւած հայերի վրայ. վիրաւորում են մէկին, բռնում երկուսին, իսկ չորրորդը սկսում է փախչել, պաշտպանելով իր ատրճանակով։ Փախչելիս նա վիրաւորում է ոստիկանին։ Նրան հետևում է թիւրք ամբոխը ատրճանակներ կրակելով և գոռալով, որ փախչողը ուզում էր պրիստաւին սպանել։ Վերջապէս ծովեզերքում սպանում են փախչող հային և նոյն ամբոխը սկսում է ցրւել քաղաքի զանազան մասերը, տարածելով այն սուտ լուրը, թէ հայերը փորձեցին Մամէդբէգովին սպանել։

„Այս դէպքը մի նոր դրութիւն է ստեղծում Բագւում. այն, որ ոստիկանութեան գործակցում է մի ոևէ հայի ձերբակալութեան դէպքում նաև զինւած թիւրք ամբոխը“։

„Բագւի մէջ—գրում են մեզ Կովկասից—հակառակ զինուորական վիճակին և մեծագոյն խոստումներին՝ ապահովութիւնը կատարելապէս բացակայում է։ Ցանցանք է, ներկայ պայմաններում, հրաւիրել ժողովրդին դէպի խաղաղութիւն, դէպի առօրեայ սովորական աշխատանք։ Ամեն ոք պատրաստ պիտի լինի, ամեն մէկը յոյսը իր պատրաստութեան, իր ուժի վրայ պիտի դնէ“։

---

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՌՈՒՍԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ

—

Անակնկալ անակնկալի վրայ։ Ո՞վ կարող էր գուշակել պատերազմի սկզբից, որ եապօնական թնդանօթի յաղթական գոռոցը պիտի լսէր մի օր Մանչուրիայի մայրաքաղաքում։ Կատարւեց անսպասելին։ Մուկդէնը գրաւած, փոքրիկ նիպօնները առաջ են մղւում անդիմադրելի սլացքով, և ցարի զօրքերը, ճարակւած, ջախջախւած, ցիր-ցան փախչում են նրանց առջևից։

Պօրտ-Արտիւրի գրաւումից յետոյ, վհատութիւնը տիրել էր արդէն Պետերբուրգի գիշատիչներին, իսկ այժմ կարելի է ասել—հոգևարք է։ Քաղաքակիրթ աշխարհը կարեկցութեամբ, արգահատանքով խաչ դրեց ռուսաց զէնքի աջողութեան վրայ, անգամ ֆրանսիական ցարասէր մամուլը տօնը փոխեց և այժմ խոհեմութեան ու խաղաղութեան յորդորներ է կարդում երբեմն անպարտելի կարծւած դաշնակցին։ Նոր փոխառութիւնների միտքը արդէն իսկ մերժման է հանդիպում Պարիզում։ Հասարակական կարծիքը Ֆրանսիայում՝ դրդւած մի կողմից Ռուսաստանի ներքին խռովութիւններից ու կոտորածներից, միւս կողմից՝ անյոյս, անխորհուրդ պատերազմի ձախորդութիւններից ու ցարիզմի զինուորական սնանկութիւնից՝ միշտ աւելի և աւելի ըմբոստանում է „դաշնակցութեան“ գաղափարի դէմ։ Հակացարական միտինգները բազմանում են և ամբիոնից ֆրանսիական մտքի հեղինակաւոր ներկայացուցիչները ցասումով նշաւակում են անորակելի բռնապետութիւնը. . .

Եւ, այնուամենայնիւ, խաղաղութեան ձայնը տակաւին արձագանք չէ գտնում ցարի շրջապատում. զինուորական կուսակցութիւնը դեռ իր ազդեցութեան տակ է պահում խեղճ վեհապետին, որը Կուրօպատկինին հրամանատարութիւնից զրկելուց յետոյ, այժմ Լինէվիչի թևերի տակ է ուզում նոր զօրք կազմակերպել. ցարը „համոզւած է“, որ Ռուսաստանը վերջ ի վերջոյ պիտի յաղթանակէ. . .

Մինչ այս մինչ այն՝ ներքին անցքերը զարգանում են ահաւոր ծաւալով։ Մի կողմից՝ սոսկալի պարտութիւններն ու հարիւր հազարաւոր զինուորների ջարդը, միւս կողմից՝ զօրաշարժի նորանոր հրամանները՝ սաստկացնում են ներքին յուզմունքը բոլոր կողմերում։ Վայրկեանէ վայրկեան կացութիւնը վտանգաւոր է դառնում միապետութեան համար։ Լեհաստանում մասսային ցոյցերին միանում են տէռօրական գործողութիւնները, ուժանակային պայթիւնները, որոնք գրեթէ ամեն օր զոհեր են խլում ռուս ոստիկանութիւնից։ Գիւղացիական շարժումներ գրեթէ ամբողջ եւրոպական Ռուսաստանում, քաղաքական սպանութիւններ ու մասսային շարժումներ նաև Կովկասում, վերջապէս զինւած ապստամբութեան պատրաստութիւններ՝ ամբողջ կայսրութեան մէջ... Վերջին կէտը առանձին մտահոգութեան առարկայ է այժմ ռուս սոցիալիստական կուսակցութիւնների համար, որոնք ճաշակեցին անզէն ցոյցերի ու շարժումների վնասակարութիւնը։

Այո, ժամ առ ժամ յեղափոխականանում է Ռուսաստանը, անցքերը արագութեամբ յաջորդում են իրար, կատարւում է թերևս ամենահոյակապ դրաման, որի նմանը չէ տեսել մարդկային պատմութիւնը։ Հետևա՞նքը. . .

Ինչ որ խղճուկ արքայական հրովարտակներ, ինչ որ

խորհրդաւոր մինիստրական ժողովներ ու նախագիծներ— ահա բռնակալութեան պատասխանը յեղափոխական շարժումներին. պարապ, ապարդիւն մարզանքներ, որոնք միայն նպատակ ունին խաբել, հանգստացնել հասարակական կարծիքը և տէր դառնալ Յեղափոխութեան...

## ՋԷՅՄՍ ԲՐԱՅՍ ԵՒ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Լոնդոնի մամուլը մանրամասն զեկուցում տուեց այն հրապարակական ճառի մասին, որ նորերս արտասանեց անգլիական պարլամենտի անդամ՝ յայտնի հայասէր Ջէյմս Բրայս:

Նիւթը արևելեան հարցն էր, Հայաստանը, Մակեդոնիան: Պատկառելի ճառախօսը, որ Տաճկաստանը հիմնովին ճանաչող սակաւաթիւ քաղաքագէտներից մէկն է, հանգամանօրէն խօսեց առկախ մնացած խնդիրների մասին և միանգամ ևս շեշտեց հայ ու մակեդոնական ճգնաժամի լուծման անհրաժեշտութեան վրայ:

Ահա այդ նշանաւոր ճառի համառօտութիւնը.

„Բեռլինի դաշնագրից յետոյ, ասաց ճառախօսը, մեծ փոփոխութիւն է տեղի ունեցել հասարակական կարծիքի մէջ Մեծ Բրիտանիայում, և մենք այլևս յափշտակութեամբ չենք խօսում յօգուտ Տաճկաստանի: Ռուսաստանում ևս Ալեքսանդր Բ.-ի սպանութիւնից ի վեր փոփոխութիւն է կատարուել: Նրա քաղաքականութիւնը դարձել է աւելի ցինիկ (շնական), այնպէս որ երբ լորդ Սօլսբըրին փորձեց կանգնեցնել հայկական ջարդերը՝ իշխան Լօբանովի անխիղճ ու եսական քաղաքականութիւնը արգելք եղաւ նրան: Ռուսաստանը տեսնելով, որ Բուլգարիան պէտք չէ զգում իր խնամակալութեանը, դարձաւ կասկածոտ ամէն մի ազատ, սահմանադրական կառավարութեան նկատմամբ, դարձաւ աւելի բռնապետական, ձգտեց աւելի ևս ռուսացնել իր իշխանութեան տակ գտնուող բոլոր ժողովուրդները:

„Մակեդոնական հարցը աւելի դժւար ու կնճռոտ է քան հայկականը, շնորհիւ այդ երկրի թշնամի ցեղերի գժտութիւններին — բուլգարների, յոյների, սերբերի, վալախների, որոնցից իւրաքանչիւրը իր յատուկ հոգևոր-եկեղեցական կազմակերպութիւններն ունի, որոնց անունով նրանք մղում են իրենց կռիւները, և տաճիկները արծարծում են նրանց թշնամութիւնը:

„Ի՞նչ դիրք էին բռնած եւրոպական պետութիւնները: Ռուսաստանը և Աւստրիան երկուսն էլ շահագրգռւած էին „հիւանդ մարդու“ ժառանգութիւնով: Ռուսաստանը ունէր ահագին զինուորական ուժ—նրա դիրքը Սև ծովի վրայ շատ տարբեր է Մանջուրիայի դիրքից—այնուամենայնիւ նա դեռ պատրաստ չէր գրաւելու Բալկանեան թերակղզին, պատրաստ չէր պատերազմի գնալու Աւստրիայի հետ կամ նոյնիսկ Բուլղարիայի, Տաճկաստանի հետ: Այդ պատճառով նա պէտք ունէր status quo-ի, որի մէջ գոյութիւն ունեցող անիշխանութիւնն ու թալանը հնարաւորութիւն կըտային նրան միջամտելու, երբ նա ուզենար: Աւստրիայի յաւակնութիւնները այդքան մեծ չէին: Նա ուզում էր գրաւել Սալօնիկը, բայց ձեռնպահ էր մնում բազմաթիւ նկատումներով: Թագաւորը ծեր էր և ցանկանում էր խաղաղութիւն, մաջառները նախանձով էին դիտում կայսրութեան սլաւ ազգերի աճումը: Այդ պատճառներով, Աւստրիան ևս գերադասում էր status quo-ն:

„Եւ հետևանքն այն էր, որ այդ երկու պետութիւնները, որոնք ամենախիստ շահագրգռւողներն են, քիչ բան արեցին, նրանց առաջարկները անկատար էին և այսպէս անւանուած ռեֆորմները չբարելաւեցին ժողովրդի վիճակը:

„Գերմանիան ուղղակի շահ չունի, բայց նա ուզում է մնալ լաւ յարաբերութեան մէջ Ռուսաստանի հետ և արտօնութիւններ ստանալ Թիւրքիայից, իսկ թէ կամենալով հովանաւորել նրան, թէև նա սիրով ու գործօն կերպով չի միջամտի յօգուտ նրան: Ֆրանսիան ուզում էր ղեկավարել մարդասիրութեան, ազատութեան սկզբունքներով, նա ուզում էր հաւատարիմ մնալ արևելեան քրիստոնեաներին ցոյց տուած իր վաղեմի հովանաւորութեան գաղափարին, բայց միւս կողմից նա կապւած էր Ռուսաստանի հետ և չէր ուզում խզել դաշնակցութիւնը: Իտալիան ևս ունենալով հանդերձ որոշ շահեր՝ տարածելու իր ազդեցութիւնը Ադրիատիկ ծովի արևելեան եզերքների վրայ՝ Ֆրանսիայի պէս համակրութեամբ էր վերաբերւում խաղաղութեան և մարդասիրութեան գործին: Ինչ վերաբերում է մեզ՝ մենք չենք ուզի, որ Թիւրք կայսրութիւնը մի ուրիշ մեծ պետութեան ձեռքն անցնի, բայց մենք պէտք ունենք մեր շահերի համար, որ խաղաղութիւն տիրէ այդ երկրում: Ով որ շատ թէ քիչ ծանօթ է Թիւրքիայի հետ, գիտէ, որ հպատակ ցեղերի վիճակը չպիտի լաւանայ քանի դեռ սուլթանի կառավարութիւնը կը շարունակի:

Բրայս բացատրում է աւստրո-ռուսական նախագծի անբաւարարութիւնը և յայտարարում է, թէ միակ ելքը՝ մակեդոնական ինքնավար պետութեան հաստատումն է տաճկական գերիշխանութեան ներքոյ:

„Հայկական խնդիրը, աւելի պարզ էր, քանի որ նրա մէջ խճճւած քաղաքական շահերը աւելի քիչ էին: Ռուսաստանը միայն, իբրև հարևան պետութիւն, ուղղակի շահագրգռւած էր, բոլոր մնացած շահերը զուտ մարդասիրական էին և եթէ քրիստոնեայ պետութիւնները իրենց պարտաւորութեան զգացումը ունենային, խնդիրը կը լուծւէր առանց մեծ դժւարութեան: Այդ լուծումը կը լինէր՝ նշանակել ալէկոծւած գաւառների համար մի կառավարիչ, որը պատասխանատու չլինէր Թիւրքիայի առաջ և որը ունենար բաւականաչափ իշխանութիւն ու ֆինանսական միջոցներ՝ վերականգնելու խաղաղութիւնը, դադարեցնելու պաշտօնեաների հարստահարութիւնները և սանձահարելու թալանող քրդերին: Դա կ'իրագործւի, եթէ Ռուսաստանը համաձայնի և նա կը համաձայնի, եթէ նրա վրայ բաւականաչափ ճնշում գործ դրւի Ֆրանսիայի, Իտալիայի և մեր կողմից: Անշուշտ, մերձաւոր Արևելքի գալոց անցքերը պիտի ազդւին այն անցքերից, որոնք տեղի կունենան աշխարհի ուրիշ մասերում...

„Մեզ ասում են յաճախ, որ մենք պէտք է մտածենք մեր սեփական շահերի մասին, բայց մենք պիտի գիտակցենք, որ ունենք պարտաւորութիւններ ևս... Կան վայրկեաններ, երբ Անգլիայի ուժը կարող է և պարտաւոր է գործադրւել յօգուտ արդարութեան և ազատութեան: Պէտք է թոյլ չտանք, որ այդ երկրները կլանւին մի մեծ պետութիւնից... Յոյս ունիմ տեսնել այդ փոքրիկ ազգութիւնները մեծացած, մի-մի պետութիւն դարձած, — դա կը լինի ի նպաստ միջերկրական պետութիւնների և ամբողջ աշխարհի: Նրանք կարող են դէպի առաջ նայել և պատկերացնել իրենց այն օրերը, երբ այդ կռւող ազգութիւնները, թիւրքական կործանարար լուծը թօթափելուց յետոյ, փոքր ինչ կը բարձրանան և կը վերստանան իրենց վաղեմի բարգաւաճումը“...

## ԱՄՍԱԼՈՒՐԵՐ

* * *

Մեր ընկեր Անդրանիկը, որ վերջին տարիներս հայկական կռիւների անպարտելի ղեկավարն էր Մեծ-Հայաստանում, ժամանակաւորապէս անցել է արտասահման:

*

Մեզ հաղորդում են Թիֆլիսից, որ կովկասեան նորփոխարքայ կոմս Վարոնցով-Դաշկով անուղղակի կերպով յայտարարել է, որ յունիսի 12-ի օրէնքը՝ հայոց եկեղեցական կալւածների մասին՝ պէտք է վերաքննւի և հայոց դպրոցների խնդիրը պիտի կարգաւորւի: Մենք մեծ հաւատ չենք ընծայում այդ խոստումներին, քանի որ հաստատ գիտենք, որ այդ զիջումների իսկական նպատակը հայ ժողովրդի իրաւունքների խոստովանութիւնը չէ, այլ մի ժամանակաւոր միջոց՝ յուզւած մտքերը փոքր ինչ խաղաղացնելու համար: Կովկասեան ժողովուրդների քաղաքական պահանջները շատ

աւելի լայն են, քան երկու տարի առաջ, և միապետական նոր-փիսարքան հիմնովին սխալւում է՝ կարծելով, որ այդ մանանկի զիջումներով կարելի է վերահաստատել սատակած խանգնրւած խաղաղութիւնը։

*

„Օրւայ խնդիրը — գրում են մեզ Կովկասից — ժողովրդին պինելու խնդիրն է։ Հասարակութեան բոլոր շրջանները էլ ներշնչւած են այդ գիտակցութեամբ. ամէն կողմից և ամէն խաւերից դիմում են յեղափոխական մարմիններին՝ դէնք ուզելու։ Զինւելու ձգտումը շատ մեծ է նոյնպէս և մահմեդական ազգաբնակութեան մէջ“։

*

Հ. Յ. Դաշնակցութեան Բաքւի կենտրոնական կոմիտէն թիւրք ժողովրդին ուղղած մի շրջաբերականի մէջ յայտարարում է հետեւեալը. „Մեր տեղեկութիւններին նայելով, տեղական մահմեդականներից մի քանիսը սատկել են ապառնական նամակներ։ Այդ նամակները կամ անանուն են, կամ գալիս են իբր թէ հայ յեղափոխական կազմակերպութիւններից։ Հաստատ համոզւած, որ այդ նամակների հեղինակները կամ արկածախնդիրներ են կամ գրգռիչներ, որոնք շարունակում են թշնամանք և ատելութիւն սերմանել, մենք յայտնում ենք, որ 1) Դաշնակցութիւնը մինչև այժմ ոչ մի ապառնական նամակ չի ուղղել սեւ թիւրքի, և 2) Եթէ Դաշնակցութիւնը հարկ է տեսնում նամակ ուղղել սեւ մէկին, այդ դէպքում նա իր նամակը վաւերացնում է կնիքով և պատշաճաւոր սատարգրութեամբ“։

*

Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան կոնգրէսը՝ գումարւած Բերն, ապրիլի 3-10-ին, ի միջի այլոց ընդունեց հետեւեալ որոշումները.

Յայտնել համակրանք՝ 1) Յարիզմի և սուլթանականութեան դէմ կռիւ մղող բոլոր ժողովուրդների ազատագրական շարժման. 2) Համակրանք մակեդոնական շարժման և այն համերաշխութեան, որ հաստատւած է հայ-մակեդոնական յեղափոխական կազմակերպութիւնների միջև. 3) Արտայայտել խորին վիշտ հայ-թիւրքական ընդհարումների առիթով, կատարւած Բաքւի մէջ, և կոչ անել երկու ժողովուրդներին՝ դէպի համերաշխութիւն, չնայելով ցարի կառավարութեան նենգամիտ դաւերից. 4) Ջերմ յարգանք „Պրո Արմենիա“-ի խմբագրական կոմիտէին, հայկական դատին ցոյց տւած գնահատելի ծառայութեան համար։

# ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱԶԴԵՐ

## ԵՐԿՈՒ ՏԷՌՕՐ

1904 թւի դեկտեմբերի 3-ին, երեկոյեան ժամը 9-ին, Թիֆլիսի փողոցներից մէկում երկու գնդակի մահացու հարւածով ընկաւ ոստիկանական ծառայող (ակալօգոնի նաղդիրատել) Տէր-Սահակովը։ Նրան ճանաչող քաղաքի ամբողջ հասարակութիւնը՝ հայ թէ վրացի, ռուս թէ թիւրք, հրճւանքով լսեց այդ լուրը, եւ խաղաղ բնակիչներից շատ շատերը սկսեցին քիչ ազատ շունչ քաշել եւ ահա թէ ինչո՛ւ։ Այդ անտանելի սրիկան իր պաշտօնավարութեան առաջին օրերից իսկ՝ հանդիսացաւ որպէս մի մարմնացեալ ոստիկան-հրէշ։ Թիֆլիսում եւ առհասարակ Կովկասում տիրող ոստիկանական հարստահարութիւնների եւ գոփումների ամենափայլուն ներկայացուցիչն էր դա։ Նրա լրբութեան եւ յանդգնութեան չափ ու սահման չկար։ Բացի այն անվերջ ու անսահման կաշառներից, որ նա առնում էր ամէն մի քայլափոխում, բացի այն ապօրինի „փեշքեշներն“ ու տուրքերը, որ նա դրել էր իր բաժնի բնակիչների վրայ, եւ որ սարսռած էին վճարել ամէն տօնի, ամէն դէպքի առիթով, Տէր-Սահակովը առանձին եռանդ էլ էր ցոյց տալիս իր ծառայութեան „քաղաքական“ բաժնում։ Նրա օրով սովորական էր դարձել արդէն՝ ցերեկները փողոցներում անցորդներին կանգնեցնելն ու խուզարկելը։ Վա՜յ նրան, հասարակ ժողովրդից, ով ընկնէր նրա ձեռքը. նրան ոստիկանատանը այնքան կը ծեծէին, մինչեւ որ կիսամեռ վայր ընկնէր, ուշագնաց։ Եւ այդպիսի դէպքեր մէկ չէր, տասը չէր։

Իշխանաւորին դուր գալու համար՝ նա կանգ չէր առնում եւ ոչ մի լիրբ միջոցի առաջ։ Մինչեւ անգամ բռնում էր անմեղ մարդկանց, նրանց չենքին փաթաթում մի ռեւէ քաղաքական յանցանք եւ ներկայացնում իշխանաւորին եւ կեղծ վկաներով հաստատելով իր անամօթ զրպարտութիւնը՝ փոխադրում էր խեղճերին Մետեխի բանտի մռայլ եւ խոնաւ խուցերում։ Տէր-Սահակովը իր այդ լրբութիւններով իհարկէ միակը չէ մեր զզւելի ոստիկանների մէջ. այդպիսի զազրելի անձանց նմաններով լիքն է մեր ոստիկանութիւնը, որոնք ամէն մի քայլափոխում ոտնատակ են տալիս քաղաքացու մարդկային արժանապատւութիւնը։ Միապետական բռնակալութիւնը իր կամայական եւ կեղեքիչ սիստէմով հազարաւոր այդպիսիներ է ստեղծում օրաւուր, սակայն Տէր-Սահակովը իր ծառայութիւններով մի գարշելի տիպար էր այդ չարիքի։ Ցուսահատ, անպաշտպան ժողովուրդը, կարծես ճարը կտրած՝ յեղափոխական գործիչներից է ապասում չարիքի վերացումն։ Կեղեքւող ժողովրդի մի մասը կարծես դէպի նա էր ուղղած եւ նա ընկաւ աէռօրիստի հարւածներից։ Տէռօրիստը ազատ է։ Եւ քանի զոյութիւն կ'ունենան նոյնանման հարստահարիչները, ժողովուրդը միշտ կը ծնի վրիժառու զաւակներ, քանի որ կը թագաւորեն կամայականութիւնն ու անարդարութիւնը եւ ժողովրդի թշնամիները կը չարունակեն իրենց անսանձ արարքները, Նեմեզիդայի սուրը չի դադարի իր հարւածները տալուց։

—

Ուղիղ 12 օր յետոյ, դեկտեմբերի 15-ին Տէր-Սահակովի բախտին արժանացաւ Շուշի քաղաքում՝ ոստիկանապետ Սախարովը։ Սա որպէս աւելի բարձր պաշտօնեայ, աւելի վնասակար արրանեակ հանդիսացաւ միապետութեան։ Սա չէր բաւականանում ոստիկանական սովորական կամայականութիւններով եւ հարստահարութիւններով, այլ ամէն ջանք գործ էր դնում սիստէմատիքաւոր թշնամութիւն սերմանելու երկու հարեւան ազգութիւնների՝ հայերի եւ թիւրքերի մէջ, կռւեցնելու նրանց իրար հետ եւ այդպիսով երկուսին խեղդելու գործն էլ հեշտացնել։ Այդ նպատակով նա չքաշւեց մինչեւ անգամ հրաւիրել թիւրք հասարակութեան յայտնի ներկայացուցիչներին եւ նրանց բացարձակապէս գրգռել հայերի դէմ, բարդելով վերջինների վրայ մի շարք անհիմն մեղադրանքներ։ Նա ստիպում էր թիւրքերի գլխաւորներին՝ թիւրք ամբոխի ատելութիւնը գրգռել հայերի դէմ։ Սակայն բարեբախտաբար թիւրքերի գլխաւորները այնքան հեռատես են գտնւել, որ չեն ենթարկւել այդ հրէշի մեքենայութիւններին եւ չեն ընկել նրա թակարդը, ապա թէ ոչ կարող էր սոսկալի եւ ցաւալի ընդհարումներ առաջ գալ երկու դարեւոր հարեւան ազգութիւնների միջեւ։

Բայց Սախարովը այնուամենայնիւ հանգիստ չէր մնում. նա յատկապէս մահմէտական լեզգիներ բերել տւեց Դաղստանից լրտեսութեան համար եւ զինելով նրանց, իրաւունք տւեց տեղն եկածին խփել։ Լեզգիները շլացած ոստիկանապետի այդ ուշադրութիւնից եւ տւած իրաւունքից՝ պտտում էին քաղաքում ապառնական դիրք բռնած, եւ պատրաստ զարկելու որոշ անձնաւորութիւնների։ Այլեւս դժւար էր համբերել՝ լեզգիներից ամենավտանգաւորը եւ ամենաեռանդոտը ենթարկւեցաւ աէռօրի։ Նամակ գրւեցաւ Սախարովին, որ միւսներին հեռացնի 24 ժամում ու ինքն էլ հեռանայ Շուշուց երկու շաբաթւայ ընթացքում։ Միւնոյն ժամանակ նամակ գրւեցաւ բարձր իշխանութեան, յայտնելով Սախարովի բռնած ընթացքի մասին եւ պահանջելով, որ նրան հեռացնեն, որպէս զի անախորժութիւններ առաջ չգան։ Սակայն բարձր իշխանութիւնը աւելորդ համարեց ուշադրութեան առնել այդ լուրջ հանգամանքը, թերեւս ուրախ, որ Սախարովի պէս գործունեայ ագենտ ունի։ Իսկ ինքը Սախարով թէպէտ անմիջապէս հեռացրեց մնացեալ լեզգիներին, սակայն իր հեռանալը աւելորդ համարեց։ Բաւական չէ այդ.—լեկցու սպանու-

թիւնն էլ նոր առիթ դարձրեց, գրգռելու թիւրքերի ատելութիւնը հայերի դէմ, լուր տարածելով, որ հայերը ապանել են լեզգուն՝ մահմէտականների դէմ ունեցած ատելութիւնից դրդուած։ Գաղանի կոմիտէն չտապեց փարատել թիւրքերի կասկածը եւ պարզեց իրողութեան ատառը։ Միաժամանակ վճռեց իրագործել Սախարովի վերաբերեալ վճիռը եւ տէռորիստի անշեղ հարուածները օրը ցերեկով մեծ փողոցի վրայ վերացրին նրան այս աշխարհից, ազատելով չարչիներին այդ պատուհասից։

Թող լաւ դիտենան միապետութիւնն կործանարար Տէր-Սահակովներն ու Սախարովները, ով եւ լինեն, որ նրանց դիմին ամէն բարէ գամոկդան որի պէս կախուած կայ տէռորիստի դաշոյնը՝ ժողովրդական վրէժխնդրութեան ահեղ թաթով թափուած...

Հ. Յ. Դ. ԿՈՎԿ. ՊԱՏԱՍԽ. ԿԵՌ. ԿՕՄԻՏԷ։

## ՆԻՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

### ԱՐԵՒՄՏԵԱՆ ԲԻՒՐՕՆ ստացած է՝

*Ռուսաստան.* — „Դրամ“ կոմիտէէն 12,000 ֆրանք։

*Շէյցարիա.* — Տիկին Շէյցարուհիէն 10 ֆրանք. „Ոէվոլուցիոնիա Բոսիա“-ի խմբագրութեան միջոցով՝ Փարիզում յօգուտ ցարիզմի զոհերուն հանգանակ. գումարէն 2372 ֆր. 50 ս.։

*Գերմանիա.* — Լայբցիգի ուսանողներէն 25 ֆրանք։

*Ռումանիա.* — Պրայիլայի Արարատ խումբէն 147 ֆրանք, նուիրատուներն են՝ Ամօ 20 ֆր., Առիւծ 20, Մուրատ 20, Կարօ 20, Ջալլատ 5, Սագօ 5, Փանոս 2, Դարքին 5, Վիշապ 5, Եղեք 5, Հէզոր անծներէ՝ Քաւոր Պետրոս 15, Վտակ 10, Փայտ 10, Թուտորաքի 5 ֆր.։ Թալէայէն՝ համազասպ 20 ֆրանք։

*Բուլգարիա.* — Սիլիստրէէն՝ 38 ֆրանք 20 սանտիմ, նուիրատուներն են՝ Անանիկ Փափազեան, Յովհաննէս Փափազեան, Ղազարոս Յակոբեան, Արթաքի Սարգիսեան, Գ. Տիրացուեան 2-ական ֆր., Յովսէփ Ղազարեան, Խաչիկ Դանիէլեան, Յովհաննէս Փափազեան, Դանիէլ Զարուբեան, Ցլաք, Ն. Տիմիթրօֆ, Ոմն, Զաքար Թոփսաքալեան, Մարտիկ Յովհաննէսեան, Գ. Թատէվիշ, Ի. Իվանօֆ, տիկին Ոմն, Եղեցուհի Ղարիբեան 1-ական, Սիմոն Պաքալեան 60 սանտիմ, Երանոս Յակոբեան, Մկրտիչ Լալեան, Կարապետ Պապիկեան, Յակոբ Յարութիւնեան, Ոմն, Մաթոս, Ս. Պաքալոֆ, Գ. Շոբոֆ, Թ. Տիմիթրոֆ, Ոմն, Վահան Աղամեան, Ոմն, Գ. Գարակէօրկի, Ոմն, Գայտանճիլզ, Ոմն, 50-ական սանտիմ, Արսթրոֆ, Արմենակ Խաչատուրեան, Ոմն 20-ական սանտիմ, Լեւոն Պաքալեան 30 ս., Ոմն 30 ս., Մի քանի օտարականներէ 5. 40 ֆրանք։ Նոյն քաղաքէն՝ ստացուած Տիր.-ի ձեռամբ 26 ֆրանք։

Ընդհանուր գումար 14,638 ֆրանք 70 սանտիմ։

### ԺԱՔՈՆ կոմիտէն՝

*1904 թ. յունիսի 27-ից մինչեւ 23 յունուարի 1905.* —

Ռոսական ազատոց խմբից 4. 60 ռուբլի, Աշոտ երկաթ 5. 40, Մունջ 3. 80, Պարոյր Հայկազն 12, Հեռատես 5. 50, Արշալոյս 13. 20, Աշոտ երկաթ խմբ. հանգ. 17, Արծիւ 12. 70, Գետ խմբ. հանգանակ. 5. 20, Խարիսխ խմբ. 22. 50, Նաւակ 14. 20, Արշալոյս II 5, տարանիք. հանգանակ. 4. 25, Նէր Պ. Մ. Մ.-ից 30, Դէորգ 3. 79, Հ. 1. 60, Զովատեղից հանգ. 22. 50, Մի պարոնից 0. 30, Փոքր ամարանոցից՝ Լուսաբեր 29. 49, Զաւէն 32. 89, Արփենիկ 22. 40, Անահիտ կանանց խմբ. 24. 17, Արփունու ձեռքով 7. 50, Վտակ 14. 60, Ննջեցեալից Մ. Գլ.-ից 50, Պարոյր Հայկազն 12, Արծիւ 10. 45, Փայլակ 5, հանգանակ. Փայլակի միջոցով 17, Հեռատես 7. 30, Եփրատ 6. 20, Լուսնթագ 6. 20, Արշալոյս I 10, Ուսուլ 11. 46, Սուրհանդակ 14, Սօս կանանց խմբ. Ֆ. 75, Եփրատ 9. 80, Շամիլ 12, Գետ ամսավճ. եւ նէր 10. 28, Կոռունկ 36, Արշալոյս II 5, Միութիւն 9. 60, Ամրոց 4, նէր Նոր յոյսից 4, Զուլումի եւ Ցասումի ներկայացումից 14. 38, Ազատասէր 5. 10, հանգանակ. Խ.-ի հարանիքից 20, Ազատասէր 3, հարանիք. հանգանակած 17. 50, Հովիւ ամսավճ. 12, Շուշան Շաւարշան 6. 20, Վրէժ 5. 90, Կարմիր աղբիւր 7. 80, Կալուց նէր 5, Սերոբ փաշա 10, Արեւելք 8. 80, Վտակ 18. 40, Այգում բէֆից հաւաքուած 10, Աշոտ Երկաթի վիճակախաղից 10. 20, Միութիւն 8, Սուրբի ձեռքով հանգանակուած 1. 47, Հովիւ խմբի միջոցով հանգանակ. 9. 60, Շամիլ 15, Գետ 8. 92, Պ. Տ. Կ.-ից 15, Մ.-ի ներկայաց. 20, Պարոյր Հայկազն 12, Ուսուլ 11. 30, Ս-ի հարանիքից հանգանակ. 4, Ռ.-ի ներկայաց. 23. 20, Հովիւ 9, Ս.-ի ձեռքով հանգանակ. 2. 41, Մ. Թ. հանգանակ. Բատոյի ձեռքով 5. 20, Պարոյր Հայկազն 12, Սեթի տաւարից հանգ. 2, Արծիւ 22. 95, Կարմիր աղբիւր 8. 26, Նէր Գ.-ից 1. 50, Մ. Տ. մի հարանիքից հանգան. 17. 20, Դ. Զ. Նէր 5, Վրէժ 12. 20, Աբաքսի ձեռքով հանգանակ. 4. 43, Նոր կարմիր աղբիւր 18. 25, Ա. Մ.-ի միջոցով հանգանակ. Վ. Ի. 4. 76, Հրաչեայի միջոցով Ն.-ի հարս. 2. 50, Փայլակ 30, Արշալոյս II 5. 65, քուքէտից 12 դեկտ. 12. 80, Վ. Զ. Շ.-ի ձեռքով հանգ. 2. 70, Կոյսի ձեռքով հանգ. հարանիք. 7. 8, Ս. Բ. Խ.-ի ձեռքով հանգ. հարս. 6. 20, Մ. Գ. Առաւանի ձեռքով 10, Ս. Տ.-ի ձեռքով հանգ. 3, Փոքր ամարանոցից՝ Լուսաբեր 11. 80, Անահիտ 2. 25, Զաւէն 2, Արփենիկ 16. 80, դեկտ. 5-ի երեկոյթից 46. 81, Մ. Մ. նէր մոր յիշատակին 50, Պարոյր Հայկազն 6. 25, դեկտ. 19-ի տիկինների եւ օրիորդների երեկոյթից 102. 99, Ազատասէր I 16. 40, Արեւելք 6. 90, նէր Շահէնից 1, Ազատասէր II 5. 55, Անդրանիկ 14. 5, Գետ 11. 22, Շղթայ 31. 70, Ուսուլ 4. 40, Աշոտ երկաթի եւ Ուսուլի յունվ. 1-ի երեկոյթից 41. 76, Աշոտ երկաթ 19, Ց. Պ.-ից նէր մոր յիշատակին 30, Սօս 24. 5, Հովիւ 2. 50, Շամիլ 8, Միհաս-ի ձեռքով հանգանակ. 3, Բ. Գ.-ից ապառիկ 3, Ռումբ 2. 15, Սերոբ փաշա 6. 25, Ամրոց 8, Միութիւն 7. 70, Զարթնացուցիչ 125. 90, Ցասում 22. 65, Իշխան 56. 86, Փունջ 50. 20, Գուրաւից 57. 30, Ստէսսէլ 66. 20, Կարապետ 29. 25, Անուշաւան 24. 79, Մասիս 36. 68, Մկրտիչ 32. 70, Լօրիս 36. 5, Լուսին 15. 90, Շաւիղ 5. 40, Նոր կարմիր աղբիւր 6. 40, Շառագայթ 57. 60, Կարմիր աղբիւր 8. 40, Շողիկի ձեռքով հրաւէրք. հանգ. 2. 62, Զարխի հանգ. Աբէլի ձեռքով 1. 77, Մունջ 11. 50, Եփրատ II 20, Աւազայր 21. 86, Առաջին քայլ 1903-ից 1904 թ. ամբողջ 30, Վրիժառու 25. 50, Մ.-ի աղջկայ հարս. 2. 12, նէր Փաշայից 1, Միսաքից 1, Սիմէօնից 0. 50, նէր Տագաք Վ.-ից 1, Ալ. 1, Դեւ. 0. 80, Վտակ 14. 20, Վրէժ 5. 10, Զրաղուրկ գ.-ից աւետիս 2. 17, Սուրհանդակ 21. 90, Պարթեւ 60. 30, Ողական ամրոց 9. 5, նէր Կ.-ից 3, Ն.-ի հանդէսից հանգանակ. 5, նէր Զ.-ից 1, Վրէժի միջոցով հանգ. 3. 60, Բօքերդի միջոցով „Մի խմիր“ գրքերից 1. 80, Հանգատի միջոցով Ա.-ի հարսանիքից 3. 35, Լօքերդի միջոցով պատկեր. 4. 86, գրքերից ստացած 1. 19, պատկերներից 2. 40 ռուբլի։ Գումար 2420 ռուբլի 59 կոպէկ։

### ԱՅՐՊԱՅԱԿԱՆԻ կեդր. Կոմիտէն՝

*Մարաստանից 1904 թ. դեկտեմբերին.* — Գագիկ 60 դրան, Գտիշ 30, Մարաստանցի 30, Սուրէն 20, Արփիկ 10, Համակրող աշակերտուհիների խմբից 10, Վարաբաղցի 20, Հրացան 25, Էլվէնդ 30, Կէտա 10, Զոհրաբ 20, Հարսի 20, Անանիմ 20, Աղամանդավաճառ 10, Հնչակեանից 15, Նորեկ 10, Աւօ 10, Մանկուռ 5 դրան։ Գումար 355 դրան։

### ԲԱԿԱՆԵԱՆ կեդր. Կոմիտէն՝

*Պուքրէշի (Ռումանիա) ենթակոմիտէն՝ 1904 թ. յունիսէն մինչեւ հոկտեմբեր 8.* —

Սերեմճեան խմբ. 65 ֆրանք, Կայծ խմբ. 25, Վազգէն խմբ. 19, Փէդայի խմբ. 33, Զէյթուն խմբէն՝ Զան 5 ֆր., Վարիք 3, Օ. Կիրակոսեան 2, Գրիգոր Դէորգեան 4, Միսակ Յակոբեան 5, Սէրվարդ 2, Կիրակոս Առաքէլեան 1, Կամարակապ 5, Ս. Յովնանեան 2, Ն. Խաչմանեան 2, Անդրանիկ խմբէն՝ Աքս 4 ֆր., Շաքար 4, Կայծակ 3, Բարսեղ 2, Նշան-քաշէն 4. Նշ“-Սարգիս 2, Ալէքսան 2, Նէվրուզ խմբէն՝ Մեծ աղբար, Փոթորիկ, Ե. Մ., Օ. Մ. Զատիկ, Պ. Արարատ, Գ. Իսկէնտէր, Պ. Իսկէնտէր, Պուղտանեան, Գ. Արարատ 2-ական ֆրանք, Տիկնանց Շաբէ խմբէն՝ տիկիններ Հ. Քէշիեան, Ն. Մանուկեան, Ս. Ադամեան, Հ. Բազաճեան, Թ. Թովմասեան, Պարակեան, Հ. Շահնազարեան, Շամ. Շահնազարեան, Իրիցկին Մայրիկ 3-ական ֆրանք, Ղարիպուտի, Աղ. Առաքելեան, Մար Իսքէնտէրեան, Աղ. Իսքէնտէրեան Վէր. Պալլաճեան, Փայլ. Մարտիկեան 2-ական, Էքրոն Միրիճանեան 1, օրիորդ Ար. Պարակեան 3 ֆր.։ Գումար 257 ֆրանք։

*Սոֆիայի ենթակոմիտէն 1904 թ. նոյեմբեր 9-էն մինչեւ 26 դեկտեմբեր.* — Սեպուհ խմբ. 282 լէվ, Թ. Զարմանեան խմբ. 30, Սերոբ Աղբիւր խմբ. 84, Անդրանիկ խմբ. 19։ Գումար 415 լէվ։

*Սլիվէնի ենթակոմիտէն՝* Տ. Վաղինակ հօր ձեռքով, ինպատ երկրի կուսակցներուն, Սլիվէնի հայ հասարակութենէն 84 ֆրանք, Ոսկեան Տիլլէրեանի պատկէն 5, Քէրմէնլի կայարանի Անդրանիկ խմբ. 74, Սլիվէնի Վասպուրական խմբ. 1904 յուլիս 25-ին հանգանակ. 55, կրկին 7 ֆր.։ Գումար 225 ֆրանք։

Ընդհանուր գումար 482 ֆրանք եւ 415 լէվ։

ՎՐԻՊԱԿ. — 1904 թ. «Դրօշակ»ի դեկտեմբեր համարի մէջ հրատարակուած Նաւահանգստի կեդր. Կոմիտէի խառն քաղաքի հանգանակութիւն՝ է. 300, պիտի լինի էր 200։

---

Մեր խմբագրութեան հասցէն՝

*Rédaction du „DROSCHAK“, Genève (Suisse*